

չըջաններու մէջ. գրականը, ուսմանը, կենդանի բարբառն եւ գաւառաբարբառները իրենց ստորաբաժանմանց մէջ, հնախօսական, լեզուագիտական եւ պատմական տեսակետներէ: Ուսումնասիրուած է Հայոց պատմութիւնը իւր նախա- եւ պատմական դարաշրջաններուն, կից Հայոց Եկեղեցւոյ պատմութիւնը իւր զանազան փուլերու մէջ: Առանձին նախասիրութեամբ ուշադրութիւն դարձուած է յատկապէս հայ հին եւ միջին դարերու մատենագրութեան, թէ ինքնագիր եւ թէ թարգմանական, առանց անտեսելու ուսմանը եւ նոր գրականութիւնը: Լոյս տեսան «Հանդէս Ամսօրեայ», ի էջերու մէջ յօրինուածական ցուցակներ զանազան մատենադարաններու մէջ, նաեւ անհատականներու քով պահուած հայերէն ձեռագիրներու. հրատարակուեցան անտիպ ընագիրներ. ուսումնասիրուեցան գիտութեան նոր լոյսի տակ հայ պատմագիրները, միջնադարեան տաղասացները, բժշկական գրականութիւնը: Նուիրուեցան ուսումնասիրութիւններ հայ հնագրութեան, գեղարուեստի եւ ճարտարարուեստի: Հայերէն թարգմանութեամբ մատչելի դարձան Եւրոպացի գիտնոց հայագիտական աշխատութիւնները: Մատենախօսական եւ Մատենագիտական բաժիններով տեղեակ պահեց Ուսումնասիրութիւնը իւր ընթացողները հայագիտական հրատարակութիւններու:

Արդեամբ «Հանդէս Ամսօրեայ», ի կազմուեցան այլ եւ այլ մատենաշարքեր, որոնք կ'ամփոփեն իրենց ծոցը մասամբ Ուսումնասիրութիւն արտատպութիւններ, մասամբ ինքնուրոյն աշխատասիրութիւններ. կը յիշենք. 1. Ազգային Մատենադարան, 145 հատոր եւ 2. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, լոյս տեսած ցայժմ՝ 13 հատոր:

Այս եւ նման արդիւնքներ ծրարեց «Հանդէս Ամսօրեայ», իւր ծոցը: Կը հարցնենք. Պիտի շահէր հայագիտութիւնը այլուստ այս հունձքը, եթէ գոյութիւն չունենար «Հանդէս Ամսօրեայ»:

Իբրեւ «հայագիտական ուսումնասիրութիւն», կարելի էր արդէն ի յառաջագունէ գուշակել, թէ պիտի բախէր «Հանդէս Ամսօրեայ», իւր ճանապարհին վրայ տնտեսական դժուարութիւններու: Զուտ մասնագիտական, թէեւ ազգային մշակոյթին նուիրուած, ուսումնասիրութիւն մը չէր կրնար յուսալ թէ պիտի գտնէ իր առաջ ընթացողներու լայն շրջանակ, որոնց բաժանորդագրութեամբ ապահովէր իւր տպագրութեան ծախքերը: Դժբախտաբար այս իրականութիւն եղաւ յընթաց 50 տարիներու, չհաշուելով սակաւատեւ լիութեան տարիները: Միխիթարեան Միաբանութիւնը, որուն հովանւոյն տակ լոյս կը տեսնէր Ուսումնասիրութիւնը, եղաւ յայսմ իր Մեկենասը: Զոհողութիւնը, զոր յանձն առաւ Միաբանութիւնս ի շահ հայ ուսմանց բարգաւաճման, գտաւ իւր բաւականութիւնը այն արդիւնքին մէջ, զոր տուաւ Ուսումնասիրութիւն հայագիտութեան:

Երախտագէտ զգածումներով պարտաւոր ենք յիշել հոս ազգասէր եւ հայ գրականութիւնը քաջալերող երկու մեծարոյ անձնաւորութիւններ, Պօղոս Նուպար փաշայ եւ Տիար Գալուստ Կիւլպէնկեան, որոնք բարեացակամ առատածնունդութեամբ յանձնատու եղան թեթեւացնել Միաբանութեանս բեռը, առաջինը «Հանդէս Ամսօրեայ», ի 1927 եւ երկրորդը 1928—1930 տարիներու ծախքերը հարթելու համար:

Եւրոպայի մէջ մասնագիտական ուսումնասիրութիւնը պետական միջոցով եւ կամ նպաստաւորութեամբ զանազան ընկերակցութեանց կը պահպանեն իրենց գոյութիւնը. «Հանդէս Ամսօրեայ» ուրախ պիտի ըլլայ, եթէ անելով ընթացողներու թիւը, բաժանորդագիրներով հաւասարակշռէր իր ծախքերը եւ հնարաւորութիւն ունենար ընդլայնելու իւր էջերը:

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ», Ի:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 1-5 3 ՈՒՆՈՒԱՐ-ՄԱՅԻՍ ԾԱ. ՏԱՐԻ 1937

ՀԻՆ ՀՈՅՈՍՏՈՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍՈՒՄՆԵՐ ՓՈՔՐ-ՀՈՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԱՍԻՆՈ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Հանգուցեալ Հ. Յ. Տաշեանի ձեռագիր մնացորդներէն հանելով կը հրատարակեմ այս աշխատութիւնը: Հեղինակը գրած էր գայն 1910ին, Կ. Պոլիս, իբրեւ պատասխան իրեն եղած հարցման մը, ինչպէս ինքնին կը բացատրէ Մուտփին մէջ:

Հեղինակին փափագն էր լրացնել աշխատութիւնս նոր նիւթերով, գործնք չէր կրցած ի Կ. Պոլիս ձեռք բերել. նաեւ ընդարձակել ներս առնելով իսաղոսիքն եւ Տայֆ եւ Բարձր Հայք, որոնք երկար ժամանակ գտնուած են Բիւզանդական իշխանութեան տակ եւ այսպէս նոյն ազդեցութեան ենթարկուած քաղաքապէս, տնտեսապէս եւ քաղաքակրթապէս:

Վիեննա վերադարձէն ետքը, որքան առողջութիւնը քոյլ կու տար, կ'աշխատէր այս ուղղութեամբ: Կը գտնեմ իր ձեռագիր մնացորդներու մէջ արդէն ըստ մասին կատարուած աշխատութիւններ Բարձր Հայքի, Տայֆի եւ Խաղտիքի վերաբերեալ: Ամբողջը իրարու հետ կապելու եւ Սեբաստիայի մասին գրածը նոյնացնելու ծրագիրը չէր կրցած սակայն իրականացնել:

Հ. Յ. Տաշեանի գրչէն բոլորով մէկ մի տող քանակարժէք է. եւ կը համարեմ քէ սիրով պիտի ողջունեն աշխատութեանս հրատարակութիւնը ամէն անոնք, որոնք կը հետաքրքրուին Հայաստանի աշխարհագրական եւ պատմական ուսումնասիրութիւններով:

Այնպէս, ինչպէս ելած է աշխատութիւնս մեծանուն Հեղինակին գրչէն, առանց փոփոխութեան, կը ներկայացնեմ «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերու մէջ: Հեղինակին արտայայ-

տութիւնք տեղ տեղ մուք են, արդիւնք հապանեպ գրութեան: Կարեւոր համարեցանք մուծել ստորաբաժանումներ (1, 2...) ի դիւրութիւն նիւթին հասկացողութեան:

ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

Հարցում մ'ուղղուած էր մեզի պատասխանելու կամ կարծիք յայտնելու՝

«Կտակազրի մը մէջ Հին Հայաստանի սահմաններում բացատրութիւնը գործածուած ըլլալով, ըստ մեզ Սեբաստիան կը նկատուի այդ սահմանին մէջ. սակայն այս մասին Ձեր կարծիքն ալ լսել ուզեցաք» եւն:

Խնդիրն ուրեմն կտակի մը որոշման վրայ է: Կտակին բուն բնագիրը մեզի անձանօթ է, եւ բաց աստի կտակ մը մեկնելու իրաւասու չենք համարիր զմեզ: Բայց որչափ մեզի այլուստ ծանօթ է՝ կտակին յօրինման եւ կատարման հետ սերտ կապ ունէր ծանօթ բանասէր մը (Կ. Եղեանց). ուստի կտակին բաներն ալ կը ղուտուած ըլլալու են, ո՛չ հարեւանցի կամ անբանասիրական իմաստով: Ուստի «Հին Հայաստանի սահմաններում» բացատրութիւնը կ'առնունք քննութեան՝ բանասիրական տեսակէտով, եւ ասոր իբր պատասխան կը ներկայացնենք յաջորդ ահնարկը:

Ա.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆԳԱԾՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ

1. «Փոքր Հայք» խնդիրը:

Բանասիրութեան տեսակետով՝ պարզ երեւցած խնդիրս շատ ալ պարզ չէ: Սեբաստիա հին Հայաստանի անմիջական սահմանակիցը չէր. կար միջանկեալ «Փոքր»-Հայք մը, որուն հետ յետոյ ձուլուեցաւ վարչապէս: Խնդիրն է ուրեմն՝ ի՞նչ աղերս ունին «Փոքր-Հայք» բուն հին Հայաստանի հետ. եւ ի՞նչ աղերս կողովենք (Սեբաստիա

հոռոճական հիմնարկութիւն մըն է), Փոքր-Հայոց հետ: Եւ ի՞նչ են առ հասարակ այն «Փոքր» Հայք, որ եղական բացատրութիւն մըն է՝ օտարաց, ո՛չ Հայոց, մինչդեռ «Մեծ» Հայք անցած է նաեւ Հայոց, բայց արդէն որոշ իմաստով՝ իբր «Հայք», «Հայոց աշխարհ»: Նաեւ յոյն եւ հոռոճացի մատենագրաց քով, որոնք կերտած են այս բացատրութիւնը եւ յաճախ կը գործածեն, ասոնց իմաստը պէսպէս է՝ ըստ ժամանակաց: Տարբեր է «Մեծ Հայք» (Armenia magna) ընդհանուր իմաստով, այն է՝ անկախ Հայաստանը նախարչակունի եւ արչակունի շրջանին տարբեր՝ Դիոկղետեան-Թէոդոսեան պաշտօնական «Մեծ Հայք» (= Բարձր Հայք) տարբեր՝ Յուստինիանոս «Մեծ Հայք» (= Ա. Հայք, այսինքն՝ բուն Փոքր-Հայք, Բարձր-Հայք, Կերասոն, Տրպիզոն)։ Եւ մինչ այս վերջինքն Մաւրիկ կայսեր «Մասն Մեծ Հայոց» կ'ըլլան՝ տարբեր է իւր «Մեծ Հայք»ը: Կարծենք կը բաւէ այսչափն ալ: Իսկ «Փոքր» նո՛յնպէս տարբեր է Աղեքսանդրեան շրջանին, տարբեր՝ Արտաշիսի եւ Դարեհի օրով, վերջապէս՝ տարբեր են «Ա. Բ. եւն Հայք»՝ Դիոկղետիանոսէ սկսեալ: Զարմանալի չէ այս ամէնը. Փոքր-Հայք՝ ղոյզն ինքնակաց կեանքէ մ'եռօք՝ պոնտական եւ հոռոճական-բիւզանդեան եղաւ, եւ երկրին տեարք կրնային վարչական բաժանումներն ընել՝ ինչպէս պատշաճ տեսնէին: Այս իրերը լաւ չըմբռնելովք է որ նոր բանասէրներէ ոմանք «Փոքր»-Հայք գաղափարը բաւական շփոթած են, այլեւայլ շրջաններ ի մի խառնած, դարեր ետքը գոյութիւն ունեցածը հնութեան հետ շաղախած, եւ ասով ելած է ոմանց քով «Փոքր-Հայք» մը, որ եթէ այնպէս ըլլար հնութեան մէջ՝ Պոնտոս-Փամփրք շատ խնդրական գոյութիւն ունենալու էին:

Ի՞նչ կ'ըսեն ընդհակառակը մեր մատենագիրք: Ասոնց պատասխանը շատ որոշ է: «Փոքր-Հայք» իրենց համար գոյութիւն չունի գրեթէ: Ո՛չ թէ անով միայն որ այս անուանակոչութիւնը գրեթէ չկայ, կամ կը յիշուի գրեթէ այնչափ եւ այնպէս՝ ինչպէս օտարաց «Արմինիք»ը, այլ նոյն իսկ պարզ այն որոշ գաղափարով որ Եփրատէն արեւմուտք Հայաստան չի համարուի: Ասդին՝ «Հայոց աշխարհ», «Հայաստան աշխարհ», «Հայք», նաեւ «Մեծ Հայք», անդին՝ «Յունաց աշխարհ», Հոռոմոց աշխարհ» են: Ամէն բա-

նասիրի ծանօթ են այս իրերը: Բայց ահա քանի մ'օրինակ՝ առաւել լուսաւորութեան համար:

2. Ազգաբանգեղոս:

Առնունք Ազգաթանգեղոսը¹. Տրդատ կը փախցուի (էջ 42) «ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց»: Պարսք «զգորս Յունաց... հարածական տանէին մինչեւ ի սահմանս Յունաց. վիհս փոսացուցեալ սահմանս հաստատէին» են: Հոռոմայեցոց սահմանը՝ որոշ է. Եփրատն էր: Ս. Գրիգոր ալ «ի կողմանս Յունաց դաղթեաց. սնանէր եւ ուսանէր ի Կեսարիայ Կապադովկացոց քաղաքին» (անդ): Ճիշդ՝ ըստ պատմութեան. Գամիրք հոռոճական էին, Կեսարիա՝ «Կապադովկիա» նահանգին կենդրոնը: Տրդատ կը դառնայ «յիւրական աշխարհն Հայոց... ի կողմանց Յունաց Տրդատ արքայ Հայոց Մեծաց» (էջ 49): Ահա սահմանադաւանը՝ «եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի զիւզն Երիզայ» (անդ). «ի Դարանաղեաց գաւառն ի դեօղն Թորդան» (էջ 588 են). «ի դաւառն Դերջան» են (էջ 593). «ի իսանն Ծովիաց աշխարհին» (էջ 597) են են: Եփրատէն անդի՛ն: Ս. Գրիգոր՝ մեծամեծ իշխանօք՝ կ'երթայ ձեռնադրուելու «ի կողմանս Կապադովկացոցն ի քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուի Մաթաք կոչեն» են (էջ 598 են): «Հասեալ ի սահմանս Յունաց, եւ բազում պատիւս կազմութեան հիւրամեծարութեան գտանէին ի քաղաքաց քաղաքաց» (էջ 602): Ասոնց մին էր ճիշդ Սեբաստիա: Եւ ահա նաեւ պայծառ ըսուած. Ս. Գրիգոր կ'ելլէ Կեսարիայէ եւ «զային հասանէին ի քաղաքն Սեբաստացոց, եւ անդ կեցեալ յերեկօթս աւուրս ոչ սակաւս»: Հոն «զտանէր բազմութիւն եղբարց, զորս հաւանեցուցանէր ընդ իւր գալ. զի վիճակեցուցէ զնոսս ի քահանայութիւն յիւրում աշխարհին» են (էջ 604—605). Եւ «նանապարհ հորդեալ եւ այսպէս բազում օրեւանօք անցեալ առողջութեամբ... Եկեալ հասպնէին ի Հայաստան աշխարհ» (էջ 606): Կարծենք ա՛լ պէտք չկայ օրինակի եւ վկայութեան, թէ եւ կրնայինք կուտել: Սեբաստիա «բազում օթեանօք» ալ հեռու է «Հայաստան» աշխարհէ. իրապէս՝ միջանկեալ աշխարհ մը կար կտրելու, որ նոյնպէս «Յունաց» էր: Եւ վերջապէս՝ ահա Հայաստանի արեւմտեան սահմանն ալ որոշակի. «Եւ

¹ Տղ. Վենետ. 1862:

այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց՝ ի ծագաց մինչեւ ի ծագս ձգէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեան. ի Սատաղացոց քաղաքն մինչեւ առ աշխարհաւն Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչ ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեան Հայոց, եւ յԱմրացոց քաղաքն մինչեւ առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորոց, առ Նոշիրական երկրաւն, եւ առ Կորդօք մինչեւ յամուր Երկիրն Մարաց, մինչեւ առ դրամբն Մահքրտան իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգէր տարածանէր գաւետարանութիւն իւր» (էջ 627—628): Ինչեւիտեան սահմանաց մասին հոս մեր գործը չէ խօսիլ². ո՛չ ալ միւս սահմանքը: Մեզի համար պէտք է արեւմտեանը միայն, որ է որոշ «ի Սատաղացոց քաղաքն» անդին: Ծատ ճիշդ. հին Սատաղան, հոռոճական հզօր եւ դարաւոր զօրանիստը, վարի՛ Մեւրտենէի՛՝ զօրանստին հետ դարերով պահպան կեցաւ Եփրատի սահմանագծին վրայ³. Եւ որուն աւերակները տակաւին կեցած են⁴: Ահա Հին Հայաստանը Տրդատայ եւ Գր. Լուսաւորչի օրով:

3. Փ. Բիւզանդ:

Ի՞նչ կ'ըսէ Բիւզանդ՝ յաջորդ շրջանին, մինչեւ Հին Հայաստանի վերջը՝ կրկին բաժանումը Հոռոճացոց եւ Պարսից մէջ: Ճիշդ նոյնպէս, եւ կարելի չէ մի առ մի յիշել «Հոռոմոց» ու «Յունաց» են բացատրութեանց անդերն, ա՛յնչափ շատ են: Սակայն ահա քանի մը նմոյշ: Յուսիկ կ'երթայ ձեռնադրուելու «ի սահմանակիցս իւրեանց ի մայր քաղաքացն Գամրաց ի Կեսարիա» (Գ. Ժբ). — յայտնապէս «Գամիրք» հոռոճական իմաստով՝ իբր նահանգ, որ «սահմանակից» էր իրօք: Նմանք՝ շատ յաճախ, օրինակ Գ. Ժզ, եւ Կեսարիայէ «զան դարձեալ յիւրեանց աշխարհն» են: Թողունք ձեռնադրութիւնքը: Տիրան կը գերուի, Պարսք կը տիրեն Հայաստանի, «աւազանին Հայոց» պատգամաւորութիւն կը զրկեն «առ թագաւորն Յունաց», թիւն կը զրկեն «աղաւաղօրքն նախարարացն Հայոց բայց նաեւ «աղաւաղօրքն նախարարացն Հայոց առեալք զԵրաքանչիւր ընդանիս, լինին

² Հմմտ. Յ. Մարկուարտ, Հայ բղեւշիք: Թրգմ. Հ. Թ. Կետիկեան: Վիեննա 1903:
³ Sks V, Chapot, La frontiere de l'Euphrate. Paris 1907.
⁴ Cumont, Studia Pontica, II, § 32. «Պոնտոսիւն...» Հայ թրգմ. (Վիեննա 1919), էջ 359—369:

փախտեայք ի կողմանս Յունաց, զոյժ տային կայսերն բազմազունք բանակին նախարարացն»: Կը լսէ «թագաւորն Յունաց... եւ չուարարեալ դայր հասանէր յերկիրն Հայոց... եւ եթող զբուն բանակն զՍատաղ քաղաքաւն» են (Գ. իա): Պատկերը շատ պայծառ է, եւ ո՛չ՝ միակը: Բայց ահա երկու ծայրի սահմանքն ալ. Սանեսան «անց ըստ իւր սահմանն՝ ընդ դեան մեծ ընդ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին... սիոնեան տարածեցան գաւառնօքն, լի եւ լի ծաւալեցան մինչեւ ի փոքր քաղաքիկն Սատաղու եւ մինչեւ ի Գանձակ սահմանս առպատական» են (Գ. է): Ուրեմն նորէն՝ արեւմուտք՝ Սատաղ եւ հետեւաբար Եփրատի գիծը: Ահա այդ գծի սահմանագաւառներն ալ. Պարսք եւ Մերուժան «ընդ այլ կաթեալ՝ ասպատակ յաշխարհն Հայոց անէին. զի ընդ Աղձնիս, ընդ Ծափս Մեծ, ընդ Անգեղ-տուն, ընդ գաւառն Անձուայ, ընդ Ծափս-Շահունց (— չմոռնանք՝ ասո՛նք են Խորենացոց «Դ Հայք» —), ընդ Մզուր (Մեծուր) գաւառն եւ ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց (— ասոնք՝ Խոր. «Բարձր-Հայոց» մասերը), զկողմանս այնց գաւառացն» են (Գ. իդ): Բերդերէն յանուանէ կը յիշուին՝ ի միջի այլոց՝ «չուրջ զԱնգեղ ամուր բերդաւն», «ամուր բերդն Անի ի Դարանաղի»: Ընդհանրապէս սահմանագաւառք յաճախ կը յիշուին Բուզանդաց քով (հմմտ. Գ. ծ, յատկապէս Ե. Ը—ԺԹ են): Աւելորդ է՝ աւելին յառաջ բերել: Եփրատէն անդին՝ հագիւ նշաւաւոր քաղաքները կը յիշուին. օրինակ՝ «հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յԱնկուրացոց... աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց» (Գ. Ժա են): Սեբաստիա չէ յիշուած ընդհանրապէս:

4. Կոռնիւն:

Գ. դարուն վերջերը՝ փոխուած են իրերը. Հայաստան բաժնուած է՝ Հոռոմայեցոց եւ Պարսից: Առաջնոց բաժնին անուանական թագաւորութիւնն ալ վերցուած է. միայն՝ կայ տակաւին Պարսից բաժնին մէջ: Ի՞նչ պիտի գրէ ուրեմն Կորնիւն՝ Մեսրոպայ պատմիչը: Հայոց համար ա՛յնպէս հաստատուն էր Հայաստանի գաղափարը՝ իւր սահմաններով, որ այսպիսի վիճակ մ'ալ չէր կրնար փոխել նոյնը, ինչպէս չէին փոխեր սահմանաց փոփոխութիւնք: Եւ անոր համար Հարէլ՝ Դանիէլեան նշանագիրքը «առաքէր առ ար-

քայն յերկիրն Հայոց» (էջ 11): Մերոպ կ'անցնի «ի կողմանս Արամի» (Եղեւիա եւն), անկից՝ «ի քաղաքն Սամուտացոց» եւ կը սկսին թարգմանութեան իւր աշակերտօքն, «որոց առաջնոյն Յովհանն անուն կարգային՝ յԵկեղեցաց դաւառէն, եւ երկրորդին՝ Յովսէփ անուն ի Պարանական տանէն» եւն (էջ 10) . ինչպէս ուրիշ աշակերտ մըն է «Տիրայր անուն ի Խորանական դաւառէն» (էջ 14) եւն եւն: Սամուտացի կը դառնայ «եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն... ի Զ. ամի Վոսաւոյն արքային Հայոց Մեծաց» (էջ 11) . այնպէս՝ ինչպէս «առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց» Ս. Սահակ (էջ 8 եւն), որուն գործքով «աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր» (էջ 12): Բացատրութիւնը ուրեմն ճշդիւ հնոյն համաձայն են, եւ անմտաղիր ընթերցողը կրնայ կարծել թէ Եկեղեցաց, Պաղ-նատուն եւ Խորանակն՝ որ յիշուած են այնպէս՝ ինչպէս պիտի յիշուէին 387էն յառաջ, որմէ ետքը հռոմէական էին՝ մասն անոնց յօրինած «Հայոց Մեծաց» (Armenia magna), որ տարբեր է Ս. Սահակայ եւ Վոսաւոյն «Հայոց Մեծաց» տիտղոսներէն: Հին Հայաստանի գաղափարն ուրեմն չէ այլայլած՝ այն բաժանմամբ ալ, որ երբ շեշտել պէտք ըլլայ՝ կը բացատրուի սա կերպով. «խորհուրդ առնոյր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց՝ որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմոց» (էջ 16): Պատգամաւորութիւն կ'երթայ թէ՛ զոսի, կ'առնուի հրաման ուսուցանելու «սակերօք կայսերազիր նշանակելովք՝ վասն մանկուոյն յաշակերտութիւն առ ի կէս ազգէն Հայոց», կու գան հոն՝ «հասանէին ի ժամաղիր կողմանս», «եւ անդէն պատահեալ սպարապետին Հայոց (= magister militum եւն, տես յետոյ) ... ի գաւառս կէս-ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր» (էջ 17) եւն: Նշանակէր որ երբ Եփրատէն անդին է խօսքը՝ նոյն բացատրութիւնը են, «անցանել ի կողմանս Յունաց» առ Անատոլիոս, «ի քաղաքն Մելիտենացոցն» (էջ 16 եւն): Ղեկնող եւ կորեւն «ի Հայաստան աշխարհէս» կ'աճապարեն Եգիպտոս քով «ընթել իջանել ի կողմանս Յունաց... ի Կոստանդինական քաղաքին» (էջ 21) . կը դառնան «երեւելով աշխարհին Հայոց» (անդ) . եւ շատ նմաններ: Միւս կողմանէ դարձեալ՝ երբ Մերոպ Գուգարքէ կը դառնայ, երբ կ'աշակերտէ «գամենայն կողմանս Հայոց, Վրաց եւ Աղուանից» (այսինքն՝ այն մասերն, որոնք 387ի կարգադրու-

թեամբ Վոսաւոյն ներքեւ չէին նաեւ Պարսից սահմանին մէջ) «գառնայր ի կողմանս Հայոց Մեծաց» (էջ 20, 22) եւն:

Դիտմամբ քիչ մ'ընդարձակ բերինք Կորեան խօսքերը՝ որոնց նման են նաեւ յաջորդ մատենագրացը, ցուցնելու թէ նախ՝ Հին Հայաստանի որոշ գաղափարը չէր մեռած, բայց նաեւ երկրորդ՝ թէ ինչպէս կ'ըլլայ որ «Մեծ Հայք» բացատրութիւնն առած են Հայք: Զմոռնանք որ մեր ամբողջ գրականութիւնը՝ զոր ունինք, անագանագոյն է ոչ միայն 387ի բաժանմանէն, այլ նաեւ 428էն՝ երբ Արշակունի թագաւորի ստուերն ալ վերցաւ Պարսից բաժնէն: Ասդին Հռոմէական Հայաստան մը կար (երկու նահանգ) . անդին՝ Պարսկահայաստան մը, բայց երկուքն ալ տակաւին ներքին վարչութեամբ (նախարարական դրութիւն՝ որոնք իրական վարիչ էին իրենց գաւառաց)՝ ընդ վերին հսկողութեամբ Կոմսի մը եւ Մարզպանի մը: Միայն Պարսկական բաժինը փոքրացած էր, շատ մը գաւառներ կցուած էին շրջակայ վարչութեանց: Այս ամէնուն մասին տես յետոյ: Կը մեկնուի ուրեմն որ «Մեծ Հայք» յարմար բացատրութիւն մըն էր՝ նշանակելու համար նախկին հին Հայաստանն իւր ամբողջ մեծութեամբ, որ այն բաժանմամբ «պակասեաց յիւրմէ մեծութեանն յայն ժամանակն եւ յայս» (Բուդ. Զ, ա. տես յետոյ): Ասկէ «Մեծ Հայք» = «Հայք, Հայոց աշխարհ» եւն: Բայց անգամ մը որ ասոր գործածութիւնը սովորական եղաւ՝ նաեւ ընդհանուր իմաստով սկսաւ ըսուիլ, ինչպէս «կաթողիկոս Հայոց Մեծաց»՝ նոյնպէս Վոսաւոյն «արքայ Հայոց Մեծաց», մինչ հազիւ կէսին արքայն էր:

5. Եղիշէ. «Ստորին Հայք»:

Այս միեւնոյն պատճառաւ է որ նաեւ յաջորդաց քով նոյն բացատրութիւնը կան, որչափ ալ փոխուած էին պարագայք: Օրինակի համար Եղիշէ՝ Վարդանանց պատմիչը՝ բնական էր որ աւելի պարզ կերպով բացատրէր Հայաստանի այն շրջանը, որ պատմուած դիպաց թատրն էր, եւ որ սահմանափակ էր, հին Հայաստանի շատ մը մասեր մարզպանական Հայաստանի հանդէպ ուրիշ դիրք ունենալով, օրինակ՝ Աղձնիքը: Անոր համար ճիշդ է որ աւելի յաճախ են «աշխարհ Հայոց», «երկիր Հայոց» (տպ. Վենետ. 1859, էջ 7, 15, 33—35, 40 եւն եւն) . եւ դարձեալ «գունդ Հայոց», «գօրք Հայոց» եւ նմաններ (էջ 53,

54 եւն եւն): Սակայն չեն պակսիր նաեւ հին բացատրութիւնք, օրինակ՝ Յաղկերտ «գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ եւ զազատորդի եւ յարքունի տանէ զոստանիկ մարդիկ» եւն (էջ 10) . եւ մինչեւ անգամ Միհր-ներսեհ իւր թուղթը կ'ուղղէ «Հայոց Մեծաց ողջոյն շատ» (էջ 20) թողլով նմանները: Միւս կողմանէ արդէն իրական վիճակը կ'արտայայտուի շատ տեղեր, օրինակ երբ արքունի «հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց եւ յԱղուանից եւ ի Լինաց, եւ ի Ծաղիկից եւ ի Կորդուաց, յԱղձնեաց եւ բազում այլ տեղեաց հեռաւորաց» . եւ դարձեալ գունդ կը կազմուի ինչպէս «ի Հայոց Մեծաց» եւ «ի Վրաց, եւ յԱղուանից եւ յաշխարհէն Լինաց» — նոյնպէս «ի կողմանց կողմանց հարաւոյ, մերձ ի սահմանս Տաճկաստանի եւ Հռոմոց աշխարհն, եւ ի Կորդուաց եւ ի Գրացն եւ ի Ծաղիկիցն եւ յԱղձնարդիւն» (էջ 10): Վարչապէս մարզպանական Հայաստանէ բաժնուած այս մասերը կը յիշուին տանէ բաժնուած այս մասերը կը յիշուին նոյնպէս յաճախ, օրինակ՝ «որպէս աշխարհին Հայոց՝ նոյնպէս Վրաց եւ Աղուանից եւ Լինաց, Աղձնեաց եւ Կորդուաց եւ Ծոթիկից եւ Գասան... յիշխանութեան Պարսից» (էջ 39), եւ նմաններ այլուր (հմմտ. էջ 72, 97 եւն): Ասոր հակառակ՝ ինչպէս կը գրուի «հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մտանէր ի քաղաքն Փայտակարան» (էջ 67), նոյնպէս «եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր եւ ի Զարաւանդ դաւառ» (էջ 81): Եթէ Փայտակարան մարզպանական դիւանին ալ վերաբերէր (571ին Սիւնեաց հետ անցաւ Ատրպատականի դիւանին), այն աշխարհներն՝ զորոնք Խորենացոյ անուամբ աշխարհագրութիւնը յետոյ «Պարսկահայք» կ'անուանէ⁵, արդէն 387ի բաժանման՝ անջատուած էին Հայաստանէ, եւ վիճակը պայծառ կը ցուցնէ Փարսիցի⁶, երբ Վաղարշի արքայից արքայի բերանը կը դնէ խօսքս առ Հազարաւուխտ թէ «Երթի Հայս... բայց զդոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուստիս Ատրպատականի՝ որ մօտ ի Հայս իցեն, եւ զայրուստիս Հեր եւ Զարաւանդ գաւառի» . եւ աւելի որոշ՝ «եկեալ Նիխոր յաշխարհս Հայոց՝ ոչ ի յիւսեաց միջամիտել ի Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի դեօղն» եւն (անդ՝ էջ 489): Սակայն Հայք իրենց Հին Հայաստանը չեն մոռցած ասկէ շատ ետքն ալ: — Տեսնենք պահ մը՝ «Յու-

նաց» մասերը: Տեսնք որ արդէն աւելի յաճախ կ'ըլլայ «Հռոմոց աշխարհ» եւն (էջ 10) . որով Յաղկերտ «յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծբին, եւ զբազում գաւառս Հռոմոց աւերաց» (էջ 8): «Հռոմոց գաւառք» սովորաբար՝ ինչպէս հոս ալ՝ Յունաց բաժնին հայ աշխարհներն են (այստեղ՝ ակնարկուածն են Ծոթիականքը, «Աղգք» կոչուած Հռոմայեցիներէն՝ Gentes, տես յետոյ), մինչդեռ «Յունաց աշխարհ» նախ՝ աւելի ընդհանուր է, եւ յատկապէս դարձեալ՝ Հին Հայաստանէ դուրս բոլոր երկիրները (հմմտ. նաեւ Հոնաց արշաւանքը, որ «կոտորեաց զգօրսն Պարսից յԱղուանս, եւ ասպատակաւ եհաս յերկիրն Յունաց, եւ բազում գերի եւ աւար խաղացոյց ի Հռոմոց, եւ ի Հայոց եւ ի Վրաց եւ յԱղուանից», էջ 104, եւ նմաններ): Ասոր համար երբ Հայք առ Թէոդոս կը գրեն «զգիւր պաղատանաց Հայոց աշխարհին, կը ստորագրեն «Յովսէփ եպ. ... եւ ամենայն գօրք Հայոց, Վասակ» եւն, կը յիշեցնեն թէ իր նախնիք «դաստակերտ մեծ եւ սիրելի զՀայոց աշխարհս անուանէին» (— որուն սահմանքը շատ տարբեր էին գրողներուն «Հայոց աշխարհ»էն —), թէ Տրդատ «ասրեալ սնաւ յերկրիդ Յունաց» եւն եւն: Նոյնպէս «զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երեւցաւ, զրեցին սուրբ եպիսկոպոստներն եւ ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն» եւն (էջ 62): Վերջապէս նաեւ ժամանակին պաշտօնական յորջորջանաց ալ նմոյշը կայ, երբ կը գրուի թէ «Այր մի՛ որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնեից՝ որ կան ի ծառայութեան Յունաց . եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն Սպարապետ էր Ստորին Հայոց եւ հաւատարիմ (գլխաւոր վերահացու) գօրացն Հռոմոց ի սահմանին Պարսից» . որով «եգիտ այս Վասակ (Սիւնի) գայն Վասակ» (Մամիկոնեան): Այս թերեւս «նեքին Հայոց» Վասակն (= Arm. interior, յն. Arm. endotate) միւս Վասակայ Հայոց հակառակ թղթերը «տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն», նոյնպէս ուժացնելու համար կը գրէր «ի Տմորիս եւ ի Կորդիսն, յԱրցախ եւ յԱղուանս, ի Վիրս եւ յաշխարհն Խաղտեաց» եւն (էջ 72), միով բանիւ Մարզպանական Հայաստանէ դուրս երկիրները: «Սպարապետ Ստորին Հայոց» թարգմանութիւն կրնայ ըլլալ Armenia interiorի, թէեւ աւելի ուղիւն էր «նեք-

⁵ Հմմտ. Մարկուարտ, «Երանշահր», էջ 109:
⁶ Տպ. Վենետ. 1873, էջ 487—488:

Գու և յՈրդրու», և Աշտատ «հալածեաց զնո-
սա մինչև ի քաղաքն Սատաղացոց», և
«բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ», զոր
առաւ: Եւ յետոյ «զնաց և և կարաւ զքա-
ղաքն Հաշտենից՝ զԿթառիճ (զրուած՝ «Զի-
թառիճ»), և զՍատաղ, և զԱռաստիա և
զՆիկոպոլիս» և և (Գ. իդ). Կթառիճ՝ Յուստի-
նեան դատաւարներէն էր՝ բուն Հայաստանի
մէջ. միւսները իրական «Փոքր-Հայոց» մէջ
են, որուն մայրաքաղաքն էր Երեւան այն Նի-
կոպոլիս: Արշաւանքը կ'երթայ մինչև «ի Կե-
սարիա Կապադոկիացոց», որ կը պաշա-
րուի. Պարսք կը դառնան «ի սահմանս
Հայոց»՝ ձմերելու «ի Հայաստան աշխարհին»,
և յետոյ կրկին «հասանէ ի Կարնոյ քաղաք,
և զիմեալ ի վերայ Մեւրինոյ, առնու զնա»
և և (Գ. իդ): Ընդ տեղն էր ուրեմն «Ա» և
«Բ Հայք» գրելու, նաև «Փոքր-Հայք»՝ եթէ
մասնաւորել ուղէր: Բայց Սերէոս չի գոր-
ծածեր ամենեւին զատմք, պարագայ մը՝ զոր
մոռնալու չէ: Նոյնպէս Հերակլի արշաւանք-
ները՝ «Չու արարեալ ի Բաղկեղոնէ եկն ի
Կեսարիա... (հմմտ. «զիմեալ ընդ Կեսարիա
Կապադոկիացոց, երթեալ հասանէ ի Հա-
յաստան երկիր» և և, Գ. իդ) ... և զէպ ու-
ղի ի Կարնոյ քաղաք, և հասեալ ի Գուին
Այրարատեան՝ աւերէ զնա և զՆախճաւան:
Եւ զիմեալ ի Գանձակ» և և (Գ. իդ): Ուրիշ
զի՞ծ մը՝ «գարձաւ յերկիրն Հայոց, անցեալ
ընդ Շիրակ՝ հասանէ ի հուն զետոյն Երաս-
խայ, և անց ըստ գետն («ընդ գետան») առ
Վարդանակերտաւ աւանաւ, երթեալ թա-
փեցաւ ի Գոգոլիտ գաւառ... ճանապարհ
կայեալ ի Հեր և ի Զարեանդ գաւառ» և և
(անդ): Վերջապէս պէտք է յիշել՝ արդէն
Արարական շրջանին սկիզբներէն՝ Կոստան-
դին կայսեր չուն (653), որ «զնաց ի Հայս
ձ հազարաւ. և իբրև և հաս ի Դերջան...
եկն ի Կարնոյ քաղաք... նստաւ արքայ Կոս-
տանդին ի Կարնոյ քաղաքի առուրս ինչ. անդ
ընդ առաջ եղեն նմա իշխանք և զարք Զոր-
բարդն կոչեցեալ Հայոց, և այլ ամենայն
գաւրքն... ընդ առաջ էլին նմա Սպերա-
ցիքն՝ իշխանքն Բագրատունեաց, և Մանա-
ղայքն և Գարաւաղայքն և որք յեկեղեաց
գաւառէ, ... և Կարնացիքն, և Տայեցիք և
Բասենացիք... և զար ըստ Այրարատայ
կողմանէ» և և (Գ. ի): Այստեղ հին «Հո-
սոմոց» գաւառքն են (387ի)՝ որոնք յանուանէ
կը յիշուին. բայց Մովսէսը կամ «Ազգք»
չատոնց «Գ Հայք» եղած էին (528), բարե-

փոխուած Մաւրիկի ատեն («Յուստինիանա»
և և որ «Գ Հայք Միջագետաց»): Այստեղ յի-
շուածը կրնայ Յուստինիանան ըլլալ. Մաւ-
րիկեան երկրորդը՝ արդէն Արարացոց ձեռքն
էր: Մնացեալը՝ որոնց վրայ կ'աւելցուին
չատ նախարարութեանց անունները, Մաւրի-
կեան Հայաստանի մասերն են՝ որուն սահ-
մանը քիչ մ'ալ ընդարձակել ձեռնարկեց Կոս-
տանդին: «Գ Հայք» անգամ մ'ալ կը յի-
շուի. «միւս դորն որ նստէր ի կողմանս Կա-
պուտիացոց (= Գամրաց)՝ արար պատե-
րազմ ընդ զորացն Յունաց. զոր և հար Յոյնն.
և զնաց փախստական ի կողմանս Արուսա-
տանի՝ հարեալ աւար զՉորրորդ Հայս» (Գ,
լլ): Այս յորջորջանքն ուրեմն սովորական
եղած էր, և կը հասկըցուի որ իբր այս ժա-
մանակները զրուած Սորենացոյ անուամբ
աշխարհագրութիւնը Հին Հայաստանի ա'յս
բաժինը գիտէ և ա'յսպէս կ'անուանէ. անուն
մը՝ որ մնացած է նաև արդի բանասիրու-
թեան համար: Ուրիշ բան նաև այս դարուս
չի գործածեր Սերէոս («Փոքր-Հայք» և
նմաններ), ուստի իւր լեզուն տարբեր չէ
նախընթացներէն, երբ նաև իբրև փոխուած
էին այնպէս որ պէտք էր գրել՝ «իշխանքն
Հայոց որ ի Յունաց և ի Տանկաց կողմանէ»
(Գ, լլ. հմմտ. «Մուշեղ Մամիկոնէից տէրն
սպաստամբեալ ի Յունաց կողմանէ՝ հնա-
զանդեցաւ ի ծառայութիւն Իսմայէլի» և և,
Գ, լլ): Քիչ մ'ետքը շատ քիչ պիտի մնար
այս «Յունաց» կողմը, որովհետեւ «զորն Իս-
մայէլի՝ որ ի Հայաստան աշխարհի՝ կալան
ծաղաց ի ծաղս գերկիրն ամենայն» (անդ):
Իսկ նոյն դարուն վերջը՝ հազիւ ծուէն մը
միայն:

8. Մ. Խորենացի:

Մնաց միայն Սորենացի, զոր ամէնէն
վերջը գրինք՝ ո'չ թէ զինքը Սերէոսէ ալ ուշ
զնելու համար, այլ՝ որպէս զի իւր ըսած-
ները զիւրաւ համեմատուին նախընթացնե-
րուն հետ: Ուստի հոս մենք ամենեւին նկատի
չենք առնուր ո'չ Սորենացոյ ժամանակի
խնդիրը, ո'չ իւր Պատմութեան պարունաւ-
կութեան և աղբերաց խնդիրները: Եստ շատ
են այս մասին ուսումնասիրութիւնք և քննու-
թիւնք, նաև խտագոյնք, և որեւէ նպատակ
չկայ հոս զբաղելու այս խնդիրներով⁸: Սո-

⁸ Կը բաւէ յիշել՝ Գարաւաղեան, «Քննական
Պատմ.», Ա.—Գ., Տիգրիս 1895: Գր.—Սայաթեանց, «Հայ-
կական վեպ» և և, Ա.—Բ., Մոսկ. 1896: «Հայ Արշա-
կունիք», Ա.—Բ., Մոսկ. 1903: Թողով յիշել շատ
ուրիշ գործեր, նաև բազմաթիւ կարեւորներ:

րենացի, ով ալ ըլլայ հեղինակն և երբ ալ
ըլլայ ժամանակը, մատան մըն է՝ որ իւր
անթիւ շիթութեամբք, այս կամ այն ձեւի
վրիպակներով, ժամանակագրական և այլ
անտեղութեամբք, եթէ կ'ուզուի՝ նաև կեղ-
ծիքներով ալ ի միասին՝ միշտ հետաքրքրա-
կան մատան մըն է, որուն կարծիքը հար-
ցընելու ենք այս խնդրոյս մէջ: Մանաւանդ
որ սա միակն է՝ իւր անունը կրող Աշխար-
հագրութեան հետ՝ որ Եփրատէն անդին
գտնուող երկիրներու մասին տեղեկութիւն-
ներ մը կու տայ, և որ՝ թէեւ ակամայ՝ քար
գայթակղութեան եղած է յետոյ, անոնց հե-
տեւութեամբ ալ՝ նոր բանասիրաց մէկ մա-
սին:

Ի՞նչ կ'ըսէ ուրեմն Սոր. Հին Հայաստանի
արեւմտեան Սահմանին և «Փոքր-Հայոց»
մասին: Պէտք չկայ շեշտելու որ նաև Սո-
րենացի «Փոքր-Հայք» բացատրութիւնը եւ
ո'չ կը փանջուց. զուր պիտի փնտռուի ասի
Սորենացոյ նման գործի մ'անթիւ անուանց
մէջ: Բայց նոյնը պիտի գտնենք ուրիշ ձեւե-
րու տակ: Սորենացոյ գաղափարին համար
կը բաւէ նշանակել թէ «Աշխարհս մեր կոչի
յանուն նախնուոյն մերոյ Հայկայ՝ Հայք»
(Ա. Ժա). և թէ Արամ «ընդարձակեալ զսահ-
մանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ ա-
նուն և ամենայն աղքը զաշխարհս մեր ա-
նունեն, որպէս Յոյնք՝ Արմէն, և Պարսիկք
և Ասորիք՝ Արմիւք» (Ա, Ժբ): Ուրեմն այս
զրուցաց Արամն է որ գործ մ'ըրած ըլլալու
է՝ Եփրատէն ալ անդին: Իրօք ալ «յարեւ-
մուտս կոչս» կ'արշաւէ, և «հասանէ ի կող-
մանս Կապադոկիացոց, ի տեղի մի՝ որ այժմ
ասի Կեսարիա»: Հոս կար՝ որ զիւրախան
կ'երեւայ՝ «Պայապիս Գաղեայ տիտանեան»
որ «բունացեալ ունէր զմիջոց երկուց ծո-
վուց մեծամեծաց՝ զՊոնտուն և զՈվկիանուն»
(— անցողակի ըսենք՝ թերեւս ազօտ յիշա-
տակ մը Հատեանց շրջանին, զորոցի ձեւ ա-
ռած): Ի հարկէ կը յաղթէ Արամ և Պայապիս
կը փախչի «ի կղզի ինչ ասիական ծովուն»:
«Եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն յաղգէ
իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ
աշխարհին, և իմքն դառնայ ի Հայս»: Ըստ
ինքեան այս վերջինը բաւական էր մեր խնդրոյ
համար: Բայց շարունակենք: Երկիրն օտար
էր, ուստի «հրաման տայ բնակչաց աշխար-
հին, ուսանել զխօսս և զիբու հայկական,
վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուա-
նին զկղզիմայն (գաւառ) զայն Պոնտուն (Պոն-

տին) Արմէնիան (այսպէս հայցականով՝ πρὸ-
τῆν Ἀρμενίαν). որ թարգմանի Առաջին Հայք:
Եւ զգաստակերտն՝ զոր շինեաց յանուն իւր
Մշակ կողմնապետն Արամայ՝ փոքրագունիւք
որմովք, անուանէին հինք աշխարհին Մա-
ծաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել, մինչև
յետոյ յոմանց ընդարձակաղոյն շինեալ՝ ա-
նուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի
ի տեղեացն այնոցիկ ցրուն իւր սահմանս՝
զբաղում անբնակ երկիր ելից բնակչօք, որ
Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք. այլ
և Զորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ
պատճառն վասն անուանելոյ գարեւմտեան
մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Եր-
րորդ և Զորրորդ Հայք: Իսկ որ այլ ի յո-
մանց ասի ի յունական կողմանս, մեզ ոչ է
հաճոյ. այլոց՝ որչափ կամք իցեն» (Ա. Ժդ):

9. Մ. Խորենացի և «Գ. Հայք»:

Ահա ամբողջը՝ զոր զիտմամբ լիովին
յառաջ բերինք: Ինչպէս կը տեսնուի, կա'ն
հոս մեր խնդրոյն համար կարեւոր կէտեր:
Արամայ «բուն սահմանք» այն «արեւմտեան
կողմը» չէին, այլ անկէ արեւելք: Ասի կը բա-
ւէր մեր խնդրոյն համար. և արդէն Սորենացի
կը պատմէ օտար երկրի մը տիրապետութիւն
և Մածաքայ Հայոցմէ շինուիլը: Այս է առաջին
կարեւոր կէտը: Բնակիչք կա'մ շատ մտացի
եղած պիտի չըլլան կա'մ շատ անփոյթ կեր-
պով ուսած «գիտօսս և լեզուս հայկական»
որ անուն մ'անգամ «ուղղախօսել» չեն կրցած:
Սորենացոյ այս գանդատը զիւրաւ կը հաս-
կըցուի, ինքն իսկ կ'ըսէ թէ այս տեղերը «ի
կողմանս Կապադոկիացոց, ի տեղի մի՝ որ այժմ
տիտանեան կ'երեւայ»: Հոս կար՝ որ զիւրախան
կ'երեւայ՝ «Պայապիս Գաղեայ տիտանեան»
որ «բունացեալ ունէր զմիջոց երկուց ծո-
վուց մեծամեծաց՝ զՊոնտուն և զՈվկիանուն»
(— անցողակի ըսենք՝ թերեւս ազօտ յիշա-
տակ մը Հատեանց շրջանին, զորոցի ձեւ ա-
ռած): Ի հարկէ կը յաղթէ Արամ և Պայապիս
կը փախչի «ի կղզի ինչ ասիական ծովուն»:
«Եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն յաղգէ
իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ
աշխարհին, և իմքն դառնայ ի Հայս»: Ըստ
ինքեան այս վերջինը բաւական էր մեր խնդրոյ
համար: Բայց շարունակենք: Երկիրն օտար
էր, ուստի «հրաման տայ բնակչաց աշխար-
հին, ուսանել զխօսս և զիբու հայկական,
վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուա-
նին զկղզիմայն (գաւառ) զայն Պոնտուն (Պոն-

կը կազմէր (Մելիտենէ) — վարչական կազմակերպութիւն մը՝ ուր բայ ի «Հայք» անունէ շատ քիչ բան կար հայկական (Հայք) — երբ Թէոդոս մը (ճիշդ Հին Հայաստանի բաժանման ատեն) այս «արեւմտեան կողմը» երկուքի կը բաժնէր (Ա. Ե. Բ. Հայք). եւ երբ Յուստինիանոս մը, չհանելով Հոռոմէասայաստանի հայ նախարարութեանց ալ դրից («մեր նախնիքներէն ծագում առած չէ») կ'ըսէ, այլ «օտար կազմակերպութեանէ» են) . ուստի թէ՛ հին «արեւմտեան» կողմը եւ թէ՛ Հոռոմէասայաստանը (Բարձր-Հայք, Ծոփք) նոր կը բաժնէ՝ Ա.—Գ. Հայք, բոլորովին տարբեր շրջաններով՝ քան առաջինքը: Թողունք նաեւ Մաւրիկի բաժանումը՝ դարձեալ տարբեր: Խորենացի չի հաճիր. բայց Յուստինիանոսի հետ հաշտ է լուելայն գոնէ անով որ սանկ յաւելուածով մը կ'աւելցընէ «այլ եւ Զորրորդ Հայք»: Որովհետեւ Խոր. չ'ուզեր որ այս «Զորրորդը» միւսներուն հետ մէկ պատուէր մէջ նետուի. եւ թէ քանի մ'անգամ ալ կրկնած է այս բացատրութիւնը՝ աւելի յաճախ շեշտած է «Ծափաց աշխարհ»ը՝ մասն Հին Հայաստանի: Եթէ Խորենացի կարգացած ըլլար Յուստինիանոս հրովարտակը, որ կը պնդէ թէ «Գ. Հայք» իրմէ յառաջ իրը նահանգ գոյութիւն չունէր, այլ «Նախարարութիւնք» էին, անշուշտ իւր տհաճութիւնը՝ գոնէ այս մասին աւելի մեղմ պիտի ըլլար:

Զիարդ եւ իցէ. Արամն ու իւր բաժանմունք կրնանք մէկզի թողուլ՝ սահմանաց խնդրոյ մէջ: Միայն չկա՞ր այս գրուցաց ներքեւ որեւէ լուրջ բան մը: Միտ դնենք որ գրուցին մէջ խնդիրը կը դառնայ Կեսարիա-Մելիտենէ գծին վրայ: Եւ այս գծին մասին Հայք միշտ իրաւունքներ մը պնդած են: Ամէնէն գեղեցիկ վկայութիւնը կու տայ նորէն Բուզանդ, որ՝ ըլլա՞յ պատմական կամ ոչ՝ Պապայ բերանը կը դնէ սա խօսքը (Ե. Լը)՝ «Եւ առաջէր հրեշտակա առ թագաւորն Յուսայ, եթէ Կեսարիա հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. եւ զՈւստա քաղաք շինեալ է նախնեաց մերոց. արդ եթէ ոչ կամիս խանդար ինչ առնել, տուր ի բաց. ապա թէ ոչ՝ կուրիմք մեծաւ պատեւազմաւ»: Ասոր արձագանգը կը լսենք շատ աւելի ուշ ալ, երբ ապստամբ Վահրամ Զորին «առ Մուշեղ եւ առ այլ նախարարս Հայոց» հրովարտակ մը կը զրկէ (590/1)՝ խոստանալով, եթէ իւր կողմն ելեն, թէ «Ձեզ տուեալ

լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն»: Եւ կը սահմանադրուի այսպէս. «Եւ թողում ձեզ դամենայն երկիրն Հայոց մինչեւ ցԿապիոն եւ ցԴուրն Աղուանից, եւ յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄծուին եւ զՆորշիրական՝ մինչեւ ցսահմանս Տաճկաց. զի առ նախնեաւքն իսկ ձեր լեալ է. եւ ընդ արեւմուտս՝ մինչեւ ցԿեսարիա Կապադովկացոց» (Մեր. Գ. Կ): Ձենք ուղեր պնդել թէ ասոնք եւ այս ժամանակի մէջ իրապէս գոյութիւն ունեցող Ա.—Գ. Հայք՝ ներշնչած ըլլան Արամի բաժանմանց եւն գրոյցը: Եթէ բաժանմանց խնդիրը բաժնենք՝ մնացեալը հին յիշատակ մը կրնայ ըլլալ: Նախ բոլորովին պատմական է Բուզանդայ աղանարկածը: Կեսարիոյ հետ ո՛չ միայն 10 քաղաք Հայոց տիրապետութեան ներքեւ ինկած են Տիգրանայ Մեծի օրով, որ ճիշդ Մաժարայ (Կեսարիոյ) հետ 10 դամբարան եւ կիլիկեան յունարեւակ քաղաքներ (ճշգրիտ՝ 12 քաղաք) լիովին մարդաթափուր ըրած է՝ բնակիչները տանելով նորակերտ Տիգրանակերտը շէնցընելու (77 ին Ն. Ք.): Գասականայ վկայութիւնք բացորոշ են. եւ ստանձնապէս կրած էր Մաժակ, որ իրօք ալ Գամբաց-Երկրին ամենահին քաղաքն է (Ստրբ. ԺԲ, 538 են): Լէման (C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, Berlin 1910, p. 382, եւ ուրիշ գործոց մէջ) մինչեւ անգամ Մաժակայ բնակչաց այս փոխադրութեան մասին կը կարծէ թէ «կարելի է որ հայ-ազգային տեսակիտով մասնաւոր նշանակութիւն մ'ունեցած ըլլայ»: Որովհետեւ «որոշ կ'երեւայ թէ Հայք՝ իրենց անունը կրող երկիրը գաղթելէն յառաջ, մեծաւ մասամբ բնակած են նախնական Հատաց (Հիտիտ) երկրին մէջ՝ որ յետոյ Գամիրք եղաւ»: Ուստի Տիգրանայ հիմնած նոր արքայանիստն ու հայկական նորածին տիեզերակալութեան մայրաքաղաքը՝ բնակեցուցած է երբեմնի հայ աշխարհին մատչելի հնագոյն մայրաքաղաքին բնակիչներով, որոնք սակայն այս միջոցին յունացած էին»: Նոյն գաղափարը կրկնած է Լէման ուրիշ տեղեր ալ (օրինակ՝ «Հայոց գաղթականութիւն» ճառը, ի Verhandlungen des XIII. Intern. Orient. Kongresses, Leiden 1904, p. 130—140). այսպէս միջնորդ մ'ըլլալով Կրէյմէրի «Արմէն» եւ Ենսէնի «Հատ-Հայ» գրութեանց: Հետեւաբար Հայոց եւ Կիմմերացոց («Գամբաց») հին աղբյուրն ծանօթութեան նշմարանք մը կը համարի Խորենացոյ Արամի այս գրոյցը, «որչափ ալ թերութիւն-

ներ ունենայ Մովսէս Խոր. եւ նաեւ անոր խարդախութիւնքն ապացուցուած ըլլան»: Նաեւ Խորենացոյ քով, կ'ըսէ, «Հայոց գաղթականութիւնը վրիպակաւ կը համարուի իբր թէ Բարեւոնէ ըլլայ, եւ միայն ի վերջոյ կը պատմուի թէ Հայք՝ արեւելքէն գալով՝ դրաւում ըլլան Գամիրքը, մինչ զեռասի իրականին գաղթականութեան սկզբնատեղիներէն մին էր: Թէ Գամիրք, որոնք միայն թրակեան-կիմմերական շիթութեանց ատեն իրենց աշխարհն եկան (որ մինչեւ այն ատեն «Կիլիկիա» էր բնդարձակ մտօք), եւ Հայք կապակցութեան աղբյուրն ունին Թրակացոց հետ՝ ապացոյց է իրենց բոլորովին նոյն տարազը (ըստ Հերոդոտոսի, եւ ըստ հին-պարսկական քանդակաց՝ Andreasի համեմատ): Մաւրթիա—Խարբերք—Տիգրայէքի գծին վրայ, որ Գամբաց աշխարհէ ելած գաղթականութեան մը համար ամէնէն յարմարն է, կը գտնուին յատուկ թրակեան կազմութեամբ կուրդաններ» են (Լէման): Հայոց — աւելի ճիշդ՝ Նախահայոց — արեւմուտքէն գաղթելը եւ Ուրարտուի՝ ապագայ Հայաստանի մէջ՝ ձուլելով եւ ձուլուելով՝ հայութիւնը կազմելը բանասիրական լուրջ խնդիր մըն է, որուն կ'անդրադառնանք յետոյ: Այս պարագայիս գրոյցն աւելի ըսելու էր թէ այն «Պայսպիս» մտաւ Արամայ երկիրը, ո՛չ թէ հակառակը: Բայց շատ բծախնդիր ըլլալու չէ գրուցաց մասին. եւ յետոյ Ուրարտեանց աղբեցութիւնը յամենայն դէպս գերակշիռ էր Հայոց վրայ ամէն մասամբ, խնդիր չկայ՝ նաեւ գրուցաց մէջ. եւ իրօք Ուրարտեան Արամիսի (իրը 860—842 Ն. Ք.) յաջորդներն արդէն դէպ ի Եփրատի գիծը յառաջ խաղացած են եւ հոն կանգնած իրենց յիշատակարանները՝ Մելիտենէի ալ ճիշդ գիմացը. եւ Մելիտենէի հին Հատեան արքայից գէմ ու անոնց հետ երկար ատեն գործ ունեցած են (տես յետոյ): Ուստի գրոյցը նաեւ այս կէտերը կրնար պարունակել:

Զիարդ եւ իցէ. Թողունք մշուշոտ հնութիւնը: Իսկ Կեսարիա—Մելիտենէ գծին համար Հայոց պնդումը լիովին կը մեկնուի Տիգրան Մեծի օրերով, երբ՝ թէեւ ո՛չ Կեսարիա՝ բայց Մելիտենէի շրջանն իրապէս Ծոփաց (Խոր. «Գ. Հայոց») հետ միացաւ եւ մնաց գոնէ քառորդ դար: Գամիրք ի հարկէ այս ատեն շատ հեռու էին «ուղղաթօսել» եւ հլու օգնական ու գործիք Հոռոմայեցոց՝ Պոմպէեան—Տիգրանեան դաշնագրութեամբ

ո՛չ միայն ետ առին Մելիտենէն, այլ նոյն իսկ Ծոփք տրուեցաւ դամբացի արքայի մը: Ծոփք՝ հայկական երկիր մը՝ չէր կրնար այնպէս մնալ. եւ կրկին Հայաստանի մաս եղաւ եւ մնաց: Բայց Մելիտենէ ալ չտեսաւ երբեք հայ արքայ մը, բայց որչափ ալ շատ կարճատեւ էր Հայոց տիրապետութիւնը՝ Հայոց ձեռքէն անցաւ Հոռոմայեցոց: Անդին՝ նաեւ այս Տիգրանի շրջանին՝ Հայաստանի հետ վարչական որեւէ կապ չունէր Մելիտենէ-Կեսարիա գծին հիւսիսակողմը՝ Փոքր-Հայք-Պոնտոս, եւ չէր կրնար ունենալ, քանի որ Տիգրանեան շրջանիս գլխաւոր դերակատարը՝ Հոռոմայեցոց ձուլութեան դէմ մաքառողը՝ Պոնտոսն էր իւր Միհրդատ Մեծով, որ խաղաղիկ կ'ըլլած էր նաեւ մինչեւ այն ատեն անկախութիւն մը պահած Փոքր-Հայքը: Վերջինս ուրեմն նաեւ այս միջոցին պահ մ'իսկ Հայաստանի մաս չեղաւ, եւ Հոռոմայեցոց անցաւ իբր մաս Պոնտոսի, ո՛չ Հայոց ձեռքէն: Հետաքրքրական է ուրեմն թէ հոս ի՞նչ պիտի ըսէ գրոյցը:

10. Ղազիկէ, Կոզանիա եւ Միջերկրեայք ըստ Մ. Խորենացոյ:

Իրապէս տարբեր է Խորենացոյ ալ ըսածը, եւ հոս գործողն է արդէն արշակունի Վաղարշակ՝ ըստ Խորենացոյ Հայաստանի լիովին նոր կազմակերպելը (նախարարութեանց են): Վաղարշակ «միաբանեալ զրոլոր կողմ աշխարհիս, հասանէ առ սահմանօքն Խաղտեաց»: Որովհետեւ «Ղազիկայ, Պոնտոս, Փոնիզիա, Մաժարք եւ այլք ոչ գիտելով դհամ պատերազմին Արշակայ, առ Մակեդոնացոց պետութիւն զմիաբանութիւն դաշանց հաստատուն պահէին»: Որչափ ալ Ղազիկէի այս միջոցին եւ այս ձեւով յիշատակութիւնը խորթ երեւնայ (որուն վրայ հոս չենք ծանրանար), մնացեալը կը յիշեցընէ իրական դէպք մը՝ Բ. դարու սկիզբը (Ն. Ք.), Պոնտոսի Փաննակայ (190—157 Ն. Ք.) օրերը, երբ իրօք «Փոնիզիա» ու «Մաժարք» եւ այլք՝ գործի մէջ էին «Պոնտոսի» (եւ «Փոքր-Հայոց») դէմ, եւ երբ գործին մէջ խառն էր նաեւ Հայաստան (Արտաշէս): Զրոյցն ի հարկէ չի կրնար ճիշդ պատմականն ըլլալ. ուստի կը շարունակուի. «Վասն որոյ ոմն Մորփիլ-ղիկեայ միաբանեալ զատացեալ կողմանս զայստոսիկ, եւ զրգուի ի պատերազմ ընդ Վաղարշակայ: Բայց պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միով բլրով քարազագաթիւն,

որ այժմ ասի Կողոմիս» : — Նորէն անագան ժամանակի մը նշմարք — «Ղազրիկէ» ի պէս — յաճախ խորենացոյ քով, եւ Կողոմիս (Գաւրահար) այս ոճով նկարագրութիւնը կը յիշեցնէ անոր անառիկ ամբողջ ըլլալն՝ արդէն Յուստինիանու օրով, եւ յետոյ՝ կենդրոն «Արամանեակ» (Արմէնիակոն՝ «Հայկական») բանակաթեմի (Բիւզանդեանց շրջանին) : Կը յարգարուի ճակատը, եւ բնականապէս կը յաղթուի Մորիելիկէս («եւ աշտէիւ հարեալ սատակէն զբաշն, եւ զգորսն առաջի արկեալ ի փախուստ դարձուցանէին») : Արդիւնքը՝ «գաղարեալ խաղաղէր երկիրն՝ նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ» (Բ. դ, 6) : Անորոշ խօսք մը, որմէ քիչ տարբեր է նաեւ յաջորդ շարունակութիւնը (Բ. դ) : «Եւ այս այսպէս կատարեալ կարգէ զկողմանս Մատաբայ եւ զՊոնտացիս եւ զԵգիպտոս : դառնայ առ ստորոտովն Պարսարայ ընդ մէջ Տայոց» եւն : Բնական իմաստն ըլլալու էր թէ Վաղարշակ Մատաբն ալ (Գամիւրք), Պոնտոսն ալ եւն՝ իւր իշխանութեան ենթարկեց, եւ այս իմաստին ոյժ կու տայ ուրիշ տեղ մ'ալ (Բ. Ժդ) : Թէեւ ո'չ նուազ անորոշ : Բայց մտադրութեան կէտ մը կայ : Վաղարշակ կը վերակազմէ Հայաստանը, հայ նախարարութեանց գործն ու սահմանները կ'որոշէ եւն : Սակայն չի յիշուիր հաս մը՝ որ Եփրատէն անդին («արեւմտեան կողմն») ըլլայ (Խոր. Բ. 5—ը եւն) : Թէեւ կը յիշուին նոյն իսկ Վերք եւ Աղուանք : «Պոնտոս» ալ կը յիշուի, բայց բոլորովին այլազգ. «Գուգարաց բղեշխ» կ'անուանէ «ընդդէմ լերին Կաւկասայ» այն «գմեծ եւ հզօր ազգն... որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ Գարեհի նախարարի» : Այս առթիւ՝ եւ յետոյ նորէն՝ կը կրկնուի թէ Նարուքողոմոսոր էր որ «Վերիացոց աշխարհն» նուաճելով՝ «գմանն մի ի նոցանէ յաջակողմն Պոնտոս ծովու յարեւմուտս տարեալ բնակեցուցանէր» Խոր. Բ. 9) : Արտաշէս ալ «զգուստը իւր զԱրտաշատայ տայ կին Միհրդատայ ումեմն Վրաց բղեշխի մեծի, որ էր ի զաւակէ Միհրդատայ Գարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Աղեքսանդր ի վերայ գերութեանն Վերիացոց, որպէս յառաջագոյն պատմեցաք. եւ հաւատոյ ամ «զկողմնակալութիւնն հիւսիսային լեռանց եւ Պոնտոս ծովու» (Բ. Ժա) : Թուգունք որ խորենացոյ քով Եւսեբեայ Քրոնիկոնի յիշեալ Նարուքողոմոսորի մասին եղած խօսքը սխալ հասկըցուած է, որ «Իբերացոց» (Սպանիա) փոխադրութենէն դէպ ի «յաջա-

կողմն Պոնտոսի»՝ եղած է «յարեւմուտս» : պատմուածին էական կէտն է Գուգարաց բղեշխութիւնն, եւ այս Գուգարական-Վրական աշխարհաց դերքը : Այս ամէնը զմեզ չի շահադրուեր, այլ այն կէտը՝ որ ասոր հետ խառնած է խորենացի յամենայն դէպս նաեւ մեծ Պոնտոսի արքայ Միհրդատոսը, եւ արդէն Արտաշիսի փեսայ Միհրդատը յամենայն դէպս կը հասկըցուի Պոնտոսի եւ փոքրասիական պետութեան ամենամեծ արքայն՝ Միհրդատ Մեծ : Բայց գոնէ ասով խորենացի — կամ թերեւս զրոյցը — ակնարկած է ընդ ազօտն թէ ինչպէս Միհրդատ տիրեց Փոքրուհայոց հետ նաեւ արեւելեան ամբողջ ծովեզերքը՝ Կողքիսը : Եւ այս կէտն աւելի որոշ կը շեշտուի յաջորդով, որ շատ կարեւոր է նաեւ մեր խնդրոյն համար : Արտաշէս մեծ աշխարհակալութիւններ կ'ընէ եւ նաեւ իբր հինգ դար յառաջ գերեզման իջած Լիւզացոց Կրիստոսը ստիպուած է յարութիւն առնել — եւ Խոր. ստիպուած է երկար՝ բայց կասկածելի՝ վկայութիւններով վաւերացնել աշխատիլ այս վերակենդանութիւնը՝ Բ. Ժդ —) բայց ի վերջոյ «Արտաշէս փախուցեալ մեռանի» եւն (Բ. Ժբ) : Յաջորդը Տիգրան (Մեծ) պարզ միջոց մը կը գտնէ ընդդէմ «զօրաց Յունաց, որք յետ մահուանն Արտաշիսի... զիմեալ գային յաշխարհս մեր» : Թէպէտ «ժողովեալ զգօրս Հայոց՝ ընդդէմ երթայ» եւ «արգելեալ ի վերջ նահանջէ» : Բայց լուսագոյն կերպը կը գտնէ այսպէս : «Եւ ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄատաբ եւ զհօգս Մէջերկրայցն եւ զօր բազում թողեալ նմա, դառնայ յաշխարհս մեր» (Բ. Ժդ) : Որչափ ալ պատիպատ ըլլայ խօսքը՝ որոշ է թէ Խոր. ալ կ'ընդունի ուրեմն թէ Միհրդատայ էր այդ ամէն կողմանց «հօգը», իսկ նոյն իսկ Մատաբ անոր տալով՝ կ'ակնարկուի Միհրդատայ Մեծի կարեւորագոյն դերն այն ամբողջ Միհրդատ-Տիգրան շրջանին՝ ընդդէմ Գամրաց եւ անոնց թիկունք եղող «Յունաց»՝ նոյնպէս անագանագոյն բացատրութիւն մը (Ա. դարուն Ն. Ք. համար) փոխանակ «Հոռովմայեցոց» : Իսկ ինչ է այն «Մէջերկրայքը» : Ասի թարգմանութիւն է յունական աշխարհագրականիս «Մեդիթէա» (= Mediterraneum), որ՝ թողունք նախնական իմաստը՝ որոշ նշանակութիւն ունէր յետոյ աշխարհագրաց քով, այսինքն կը նշանակէ՝ արդի բացատրութեամբ՝ «Փոքր-Ասիա», որ կը հասնէր ճիշդ մինչեւ Եփրատը բայց բնականապէս նաեւ այս

կամ այն մասը : Եփրատ կարեւոր սահմանագիծ էր բնականապէս նաեւ աշխարհագրաց համար (հմմտ. նաեւ Խոր. Աշխարհագրութիւնը՝ թիչ ետքը) : Յունական բառն ալ գործածուած է մեր մատենագրաց քով : այսպէս երբ Աւուսը Երէց կը գրէ թէ Մայիմ «առեալ զրազմութիւն զօրացն՝ անցանէր ընդ Կիլիկիա յԱսորոց յաշխարհն Միւսիգիոն»՝ որ թարգմանի Միջերկրայք, եւ երթեալ հասանէր յաշխարհն Բիւթանացոց» (զլ. Ը, տպ. Փարիզ, 1857, էջ 133) : Խորենացոյ քովը նոյն բացատրութիւնը կը կրկնուի քանի մ'անգամ՝ թէ՛ ընդհանուր եւ թէ՛ մասնական իմաստով (այլեւայլ իմաստներուն համար հմմտ. «Կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէ Հերովդի, այլ եւ զամենայն Միջերկրայս նմա հաւատայ»՝ Բ. իե, եւ «Հերովդէս զաներ Աղեքսանդրի որդոյ իւրոյ... ընդ իւրով ձեռամբ թագաւոր Միջերկրայցն կացուցանէր՝ առեալ իւր ի սպասաւորութիւն տանն զունդ ի Գաղատացոց եւ ի Պոնտացոց»՝ անդ. խօսքն է Հերովդէան այն ճիւղի մասին՝ որ Գամիւրք անցաւ : Պոմպէոս «հասեալ ի Մէջերկրայս, զՍկաւրոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ»՝ Բ. Ժե : «Յասպատակել Պերոզի... հրամանաւ նորին եւ մերն Տիգրան ի Մէջերկրայս. եւ ի կարանս ըմբռնեալ յաղկանէ միջէ կողմանցն այնոցիկ, մինչդեռ Ղուկիանոս կեսար... անցեալ զօրօք բազմօք ի Մէջերկրայսն յետ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս» : Բ. կդ : Վրթանէս եւ եպիսկոպոսունք կը գրեն կայսեր՝ «Աստուած զձեզ ո'չ միայն Եւրոպոյ, այլ եւ ամենայն Միջերկրայց տիրեցոյց»՝ Գ. 6 : Շապուհ «յարձակեցաւ ի Միջերկրայս եւ ի Պաղեստինէ»՝ Գ. Ժբ : Վաղենտինոս «գումարտակ ի Միջերկրայս առաքեալ» եւն՝ Գ. Ժթ եւն) : Զիարդ եւ իցէ. Տիգրան ուրեմն «դառնայ յաշխարհս մեր. առաջին գործ զմեհեանս շինել կամեցաւ» : Բայց քրմերը՝ «զի մի ի խորագոյն Հայս վարիցեմ, պատճառեցան ըզմութիւնս», ուստի պատկերք կանգնուեցան «յամուրն Անի... ի Թիլ... յերիզայ... ի Բագայառիս» եւն (Բ. Ժդ) : Ասկէ աւելի պայծառ պէտք չկայ տեղ մը փնտռելու : «յաշխարհս մեր» հաղիւ եկած ճիշդ սահմանին վրայ են Գարանագի, Եկեղեաց, Դերջան՝ յիշեալ տեղերով : Այստեղ չենք ուզեր խնդիր ընել թէ այն «խորագոյն Հայք» դասակարգ իմաստով է թէ նորէն աշխարհագրական : Վերջին պարագային՝ նոյն իսկ

Յուստինիանու «Ներքագոյնը» չի կրնար ըլլալ, քանի որ ճիշդ հոն մնացին քուրմերը, այլ ստիպուած ենք Մաւրիկի Armenia profunda փնտռել :

11. Մ. Խորենացի եւ «Ծովաց աշխարհ» :

Թէ ուրեմն Եփրատու սահմանագիծը պէտք է որ յաճախ յիշուած ըլլայ՝ ինքնին կը հետեւի : Կը բաւէ յիշել միայն իսկ քանի մը տեղ, օրինակ՝ Գարեհանոս «ոչ իշխեաց ի դիմի հարկանել Տիգրանայ, դառնայ յԵփրատայ յԵգիպտոս» եւն (Բ. Ժդ) : Կրասոս «խաղայ ի վերայ Տիգրանայ եւ անցեալ ընդ Եփրատ՝ սատակի» եւն (Բ. Ժէ) : Բայց Կասիոս «եկեալ եւ ընդդէմ կացեալ՝ չտայ թոյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ» (Բ. Ժբ) : Բենդիզոս «զՍիդոն թողուլ ընդդիմակաց Հայոց մերձ ի յԵփրատ» (Բ. ի) : Արգար «չինէ քաղաք զտեղի պահպանութեան գնդին Հայոց, ուր յառաջագոյն զգուշանային Եփրատու ի Կասիոսէ, որ կոչի Եդեսիա» (Բ. իէ) : Եւ ընդհանրապէս Արտաշիւր «եւ ճակատ ընդ զօրս Հոռովմայեցոց կրկին՝ աստի եւ անտի Եփրատու» (Բ. Ժթ) եւն եւն : Հետեւաբար նաեւ Ծովաց մասին տարբեր գաղափար չունի խորենացի, որչափ ալ «միջերկրայ» Ա—Գ «Հայոց» հետ կապած էր «այլ եւ Զարբար Հայք»՝ Արամայ զրուցին մէջ (տես վերը) : Ասի կը շեշտենք անոր համար որ յետագոյնք (Յովհ. կաթ. եւն) խորենացոյ այս Ա—Գ Հայքն այնպիսի ձեւի բերած են, որ ըստ երեւութի նաեւ Ծովք Հին Հայաստանէ դուրս մնալու էր : Արդ կրնար կարծուիլ թէ գուցէ խորենացի ալ ասով բացատրած ըլլայ յոյն եւ լատին այլեւայլ (ո'չ ամէն) մատենագրաց այն կարծիքն՝ որ Ծովքը Հայաստանէ գատ երկիր մը կ'ըմբռնեն կամ կ'ուզեն ըմբռնել : Օրինակ երբ Պղոտարքոս (Ղուկ. իդ) կ'ըսէ թէ Ղուկուզոս (դէպ ի Տիգրանակերտ) Եփրատն անցնելէն ետքը քանի մ'օր ճամբայ ըրաւ եւ Տիգրիսն անցնելէն ետքը մտաւ ի Հայս. կամ երբ Ստեփ. Բիւզանդացի կ'ըսէ թէ «Ծովք Հայաստանի քովի գաւառներէն մին», եւ նմաններ : Այս իրերը յառաջ եկած են անկէ որ Ծովք իբր ընդհանուր գաղափար անորոշ էր յաճախ եւ իրապէս պէսպէս սահմաններ ունեցաւ, եւ յոյն եւ լատին հին մատենագիրք յամենայն դէպս երբեմն կը շփոթեն Ծովք Շահէի եւ Մեծ Ծովք, եւ վերջապէս որ Ծովաց թագաւորութիւնն անկախ դերք ունէր՝ մինչեւ Տիգրան մեծ, որ վերջ

տուաւ անոր, Տիգրան որ (ըստ Ստրաբոնի, ԺԱ, 15 էւն) ունէր «իրբեւ թագաւոր դրուն Հայաստան, այն է զբովանդակ մասն երկրին որ ձգի զՄարօք, զԱղուանիւք եւ զՎրօք մինչեւ ի Կողքիս եւ ի ծովեղերեայն Կապպադովկիա»։ Իսկ Արտանէս «ժառանգէր զՀարաւային Հայաստան, մանաւանդ զմասն արեւմտից հարաւոյ» էւն։ Անոր համար նոյն Ստրաբոն ինչպէս կը գրէ «Եկեղեաց եւ Ծովիք ի Մեծ Հայս»՝ նոյնպէս «Ծովիք եւ միւս Հայաստան» էւն։ Հետեւաբար ուղիղ է Հիւրէմանի ալ մեկնութիւնը (տես «Հին Հայոց տեղւոյ անուններ», էջ 28. Ծովիաց խնդրոյ մասին՝ էջ 69—73, 142—151 էւն), թէ «Ծովիք հայկական երկիր մըն էր, բայց թէ՛ Տիգրանէն յառաջ եւ թէ՛ ետքը երկայն ատեն բուն Հայաստանէն (հիւսիսային եւ արեւելեան կողմանէ) զատ տէրութիւն էր, այս պատճառաւ ալ կրնար թէ՛ Հայաստանի մաս համարուիլ եւ թէ՛ Համարուիլ»։ Լէման՝ Տիգրանակերտի տեղւոյ քննութեան յաժմէ՛ առանձինն գլուխ մ'ալ նուիրած է Ծովիաց-Աղձնեաց խնդրոյն, տեղւոյ վրայ ուսումնասիրելով Ստրաբոնի եւ այլոց Ծովիաց, Տաւրոսի եւ Անտիտաւրոսի, Մասիոսի եւն մասին ըսածները, ինչպէս նաեւ Ղուկուղոսի, Կորբուզանի ուղեգրերը եւն («Հայաստան», էջ 501—523, թողով յիշել ուրիշ գործեր ալ, օրինակ՝ Վ. Բէլքի «Հին Հայաստանի Աշխարհագրութիւնը. Ա. Ծովիք». Բերլ. 1901 էւն)։ Եւ կը գտնէ թէ զժողովրդիւնք կրնան հարթուիլ՝ տեղեաց ուսումնասիրութեամբ եւ զանազանիւր աշխարհագրականը՝ քաղաքականէն (սահմանք պետութեան Ծովիաց եւն)։ Արդէն այս իրերու մէջ խառն է քաղաքականութիւնն ալ. եւ Հռովմայեցիք չէին ուղեր ճանչնալ Տիգրանի ձեռք կատարուած միութիւնը ծովական թագաւորութեան, ուստի զայն առանձինն աւատ մը կը նկատէին, եւ այս ձեւը պահեցին նաեւ երբ Ներոն, Ծովիքը Սոհեմոսի տակէն ետքը՝ ստիպուած էր Տրդատայ Պարթևի յանձնել՝ Հայաստանի թագին հետ (տես նաև յետոյ)։ Բայց արդ Սորենացոյ թով այսպիսի զաղափարներ պէտք չէր փնտռել։ Արդէն պայծառ կ'ըսէ թէ Վաղարշակ «հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծովիաց» ի Չորրորդ կոչեցեալ Հայս» (Բ. Ը)։ Իրեն թով ուրեմն այդ «Գ Հայք» աշխարհագրական անունակոչութիւն մըն է, ոչ աւելի ինչ, թողով այն կէտը թէ Յուստինիանու տեղի եւս յետոյ՝ «Գ Հայոց» ծաւալը ո'րչափ

կը համապատասխանէր «Ծովիաց»։ Տարբեր մտօք չեն Սորենացոյ միւս տեղերն ալ. այսպէս՝ «Արքեղայոս, որ կարգեալ էր ի վերահացութիւն Չորրորդն կոչեցեալ Հայոց... պատահեալ ի ճանապարհի ի Ծովիաց գաւառին սպան զնա (զՄ. Ռստակէս) սրով» էւն (Գ, զա. հմմտ. Բուզ. Գ. Բ «տարաւ զնա ի Ծովիաց գաւառէ»)։ Հայաստանի բաժանումէն ետքը՝ կ'ապստամբին Վանանդացիք, որոնց վրայ զնաց Սահակ ասպետ, եւ «զբազումս փախտական արար ի կողմանս Չորրորդ Հայոց. զի ո'չ յերկիրն Սաղտեաց անկան՝ ի Յոյնս ապաւինելով, եւ ո'չ առ թագաւորն Արշակ անցին. այլ զաւաղակս ոմանս՝ որ ի կողմանս Չորրորդ Հայոց էին, ի սահմանս Ասորւոց, զիմեցին ապաստան առնել» (Գ. Խդ)։ Նոյն Արշակ սակայն «էր հանեալ զգանձսն... յամրոցէն Հանույ՝ տանել յաշխարհն Ծովիաց», զոր յափշտակել ուղեցին Սոսրովու կողմնակիցք եւն (Գ. Խդ)։ — Գլուխներ՝ որ զեղեցիկ կը բացատրեն նախարարաց գերբը՝ բաժանմանէն ետքը եւ սահմաններու վիճակը։ Յաճախ է այլուր պարզ «Ծովիք» անունը, այսպէս՝ ի Սլիւնեաց «երկուք ոմանք փախտական անկան յաշխարհն Ծովիաց» (Բ. ձդ)։ «հարաւային մեր գունդք առ արքային Սոսրովայ էին յաշխարհին Ծովիաց» (Գ. Թ)։ «հասեալ Տիրանայ ի գաւառն Ծովիաց յիւրում արքունական եկեղեցոջն կամեցաւ կանգնել զպատկերն» (Գ. Ժդ), եւ նմաններ։ Անոր համար՝ ինչպէս կը յիշուի «Մար իշխան Ծովիաց» (Գ. դ), նոյնպէս առանձինն գաւառացը, օրինակ՝ «Սաղամութ տէր Անծտայ» (Գ. Ժդ)։ Անգեղ-տուն առանձինն զրոյց ալ ունի (Բ. Ը) էւն էւն։

12. Մ. Խորենացի եւ «Աշխարհ Յունաց»։

Միով բանիւ Սորենացոյ թով զանազանելու է իւր զրոյցները, իր պատմական տարբերութիւնք՝ հարազատ կամ ոչ, ճիշդ կամ անճիշդ, եւ իւր աշխարհագրութիւնը՝ որ տարբեր չէ միւսներէն։ Եւ այս մասին Սորենացի միշտ կարեւոր աղբիւրներէն մին է։ Վերջնոցս մէջ ալ միտ զնելու է Սորենացոյ առանձնայատկութեանց եւ անոնց իմաստին, ինչպէս յիշեալ «Միջերկրեայք»։ Օրինակի համար «կողմանք Կեսարու» ընդհանուր Գամրաց իմաստով է՝ ըլլայ Գամրաց թագաւորութիւնը, ըլլայ շատ աւելի ընդարձակ հռոմէական Կապպադովկիա նահանգը (հմմտ. Բ. Ժբ, իդ, իդ էւն) = «ի կողմանս Գամ-

րաց» (Բ. ձ)։ Կը բաւէ յիշել միակ օրինակ մը. Արտաշէս հարկ չի տար, որով «Գոմեախանոսի կայսեր ցասուցեալ, զորս ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ ի կողմանս Կեսարու», զՏիրան եւ արեւմտեան զորքը կը մղեն մինչեւ Բասեն. բայց Սմբատ կը հասնի եւ յաղթելով «հարաւեաց զգորսն Հռովմայեցեւ յաղթելով «հարաւեաց զգորսն Հռովմայեցեւ» (Բ. ձդ)։

Սորենացոյ նման գործի մը մէջ եւ ո'չ կարելի է մի առ մի թուել այսպիսի բացատրութիւնքն, թէ Ներսէս «ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիա եւ եկեալ ի Հայս» (Գ. ի)։ Այսպիսիք անհամար են։ Իսկ ուր արդէն կը սկսի իւր պատմութիւնը զուգընթանալ Ազաթանդեղոսի, Բուզանդայ եւ Կորեան, կրնանք քայլ առ քայլ համեմատել։ Այս բազմաթիւնք յաճախ կատարուած են, բազմաթիւ են քննութիւնք եւ քննադատութիւնք։ Մեր նպատակը չէ ասով զբաղիլ։ Բայց աւելորդ չէ ըսել թէ մեր խնդրոյ մասին՝ աշխարհագրորդն Սոր. ալ տարբեր չէ միւսներէն, եւ չէր կրնար ըլլալ, երբ ինքն է որ կ'ըսէ թէ առաջնորդ պիտի առնու՝ օրինակի համար՝ զԱզաթանդեղոս, բայց աւելի ընդարձակ պիտի գրէ (Բ. կէ)։ Ուստի կը բաւէ միայն քանի մը բան ուր պատմական պէսպիսութիւնք նկատի չենք առնուր։ Ս. Գր. Լուսաւորիչ «ոչ յամեաց ի Կեսարիայ, այլ փութապէս դարձեալ՝ ի Սերաստացոյց քաղաքին անսայր հաւաքել զնիւթ վարդապետութեանն» (Բ. ձ)։ Նունէ «քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ զբամբը Ալանաց եւ Կասրից մինչեւ ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ազաթանդեղոս» (Բ. ձդ)։ ակնարկելով Ազաթանդեղոս տուած սահմանադրերը՝ զոր յիշեցինք (էջ 627, տես վերը)։ Ի հարկէ մաս մը միայն. արեւմտեանը՝ Մասաղն՝ իւր նպատակին համար հոս աւելորդ տաղն՝ իւր նպատակին համար հոս աւելորդ էր, ինչպէս միւս զծերը։ Կարեւոր է Սորենացոյ զիբը մանաւանդ Հայաստանի 387 ի բաժանմանէն ետքն, անով որ Բուզանդ մինչեւ հոս կը հասցընէ. Կորիւն եւ Փարպեցի ալ կա՛մ համառօտ տեղեկութիւն միայն կու տան կամ մասնական ժամանակամիջոցի մը համար միայն։ Ի հարկէ միշտ աչքի առջեւ ունենալու է Սորենացոյ շիթութիւնքն եւ անժամանակութիւնքն. այսպէս՝ այս բաժանումը կու տայ Արկաղեայ, որ «թերուղի»

էր եւն (Գ. խբ)։ Ուստի «յանձն առին բաժանել զՄիջագետս եւ զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ»։ Եւ Արշակ թողով «գրուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ եւ զամենայն մասն բաժնին Պարսից, զնաց տիրել արեւմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ ի մասն ի բաժնին Յունաց» էւն (անդ)։ Նախարարներէն մաս մը «ունէին զիշխանութիւն ի գաւառս բաժնին Պարսից» եւ հոն զնացին նորէն, բայց ոչ ամէնքը, ուստի «զժառանգութիւնս նոցա կալաւ Սոսրով. յարքունիս»։ Ուրիշները «որք ունէին զիշխանութիւնս իւրեանց ի բաժնին Յունաց... խնդրեցին դալ առ Սոսրով», ինչպէս Սահակ ասպետ, եւ ուստի «եղեւ քննութիւն սուտ զմանէ յազգականաց իւրոց ի Սպեր գաւառէ» էւն (Գ. խդ)։ Թողունք ուրիշ մանրամասնութիւնքը. Սորենացոյ այս մտաբէն կը քաղուի երկու բաժնին սահմանը եւ անոնց մէջ տիրած վիճակը։ Բացատրութեանց մասին հմմտ. «Ստրատելլատ Գաղաւտն եւ ամենայն նախարարք մասինն Յունաց» (Բ. խբ)։ Կամ Սոսրով «խնդրէ ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց» որ ի Հայս» (Բ. խթ) եւ նմաններ։ Գրոց զիւտի առթիւ չափազանց կարեւոր՝ յունահայութեան խընդրոյն համար՝ յաջորդ խօսքը. թէ Մեսրոպ «զպրոցս կարգեաց յամենայն գաւառս, եւ ուսոյց զքնաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ բայց ի Յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յարձու կեսարու, վարել յունական դպրութեամբ եւ ո'չ սոսրով» (Գ. ձդ)։ Այս մասին կ'անդրադառնանք նաև յետոյ։ Սակայն Հայոց յաջողեցաւ հրաման ստանալ նաև այս բաժնին համար (հմմտ. Գ. ձէ էւն)։ Աւելորդ է Կորեան մասերը համեմատել հոս. Սորենացի նամակներ ալ ունի եւ նմաններ, կը խառնէ պատմական այլ պարագաներ, ինչպէս Թէոփոլոսոյ շինութիւնը (Գ. ձթ) էւն։ Միտ զնեք որ աշակերտք ինչպէս կը զրկուին Մելիտենէ, եւ ապա Բիւզանդիոն (Գ. ձէ էւն)։ Նոյնպէս «ի Կեսարիայ», բայց ասոնք «յուրարար ուղեւորեալ եւ ծուլարար զեղերեալք պատաղեցան» (Գ. կ), որ կրնայ իրական ըլլալ՝ թէ եւ բացատրութիւնը փոխառութիւն մըն է (այս եւ նման խնդրոց մասին՝ հմմտ. Գր. Սալաթեանց, «Հայ Արշակունիք ըստ Մ. Սորենացոյ», քաղ. թրդմ. Արսէն Սրկ. Միմոնեանց, Վիեննա 1906. քէզ մը խիստ՝ Գաղաւտն Յ. «Փաւստոս Բիւզանդացի եւ

լուր Պատմութեան խորհրդարանը. Մ. Սորենացու աղբիւրներու ուսումնասիրութիւն», Վիեննա 1898. եւ ուրիշ բազմաթիւ գործեր): Մենք կարենոր կը համարինք՝ յունահայութեան պատմութեան համար՝ նաեւ Բրքիչոյի տեղ կաթողիկոս մը խնդրելու առթիւ տրուած տեղեկութիւնը, թէեւ միտին ըլլայ: Նախաբարք երկու բաժնուած էին, կ'ըսէ. ոմանք կ'ուզէին՝ «զոր ոք եւ արքայ կամեցի». ուրիշները՝ «զմեծն Սահակ»: Կ'աւելցուի՝ «նա եւ զօրավարին Յունաց Անատոլիայ ի Կարնոյ գլխաւի ի Կուկայառնոյ. զի եթէ ոչ իցէ նմ հաճոյ ունել յիւրում բաժնին՝ տացէ զնա մասինն Յունաց» (Գ. կէ): Իրն այս ձեւի տակ ըլլալու չէ անշուշտ, եւ ո'չ ալ յոյն սպարապետը՝ քանի որ արքայից արքայի հետ է գործը՝ ուղղակի առաջարկութիւն ըրած, կամ նման սպառնալիք մ'ըրած՝ ինչպէս յետոյ ըրած է Մժէժ Գնունի (Սեբ. Գ. իթ, տես յետոյ): Բայց անկարելի չէ մտածել թէ արդէն այս ժամանակ — հայ գաղութեան եւ հայ լեզուաւ եկեղեցական պաշտամանց տարածուելով — խորհուած ըլլայ Հոմէրոսի պատման մէջ հետզհետէ աճող հայածէս եկեղեցեաց ուրոյն գլուխ մը տալ, որով որոշուէր այս կողմանց գերբը հանդէպ յունածէս եպիսկոպոսարանաց եւ նաեւ Կեսարիոյ: Թէ իրեն ինչ ընթացք առած են՝ չենք գիտեր: Թովմայ Արծրունոյ զՀաւուկ այս բաժնին կաթողիկոս կոչելը՝ համոզիչ փաստ մը չէ (համ. նաեւ Գր. Սալաթեանց, անդ, էջ 48): Յաջորդ ժամանակը չի վկայեր նման բան մը, այսինքն՝ կաթողիկոսութեան բաժանում չենք գտներ՝ մինչեւ Ձ. դարուն վերջը (տես յետոյ): — Ուրիշ կարենոր գիտելիք մը չունի Սոր. մեր խնդրոյ համար, ուստի բաւական կը համարինք այսչափը:

13. Աշխարհացոյց Մ. Սորենացոյ:

Կը մնայ միակ աղբիւր մ'ալ նկատի առնելու, որուն անունը կապուած է Սորենացոյ հետ: Ասի է «Աշխարհացոյց Մ. Սորենացոյ»⁹: Հոս նկատողութեան չենք կրնար առնուլ ո'չ ասոր հեղինակին, ո'չ Սորենացոյ հետ կապակցութեան եւ ո'չ յարակից խնդիրները, որոնք շատ անգամ քննութեան առնուած են (համ. նաեւ Հիւրշման, անդ,

⁹ Համառոտ՝ տղ. Մատենագրութիւնը, Վիեննա, 1843, էջ 585 եւն: Բնագրական՝ հայ-գղ., Géographie de Moïse de Corène, ed. P. Arsène Soukry, Վիեննա, 1881:

էջ 262—267 եւ այլուր): Կը բաւէ զիտնալ նախ որ շատ մեծ համաձայնութիւններ կան ասոր եւ Սորենացոյ անունը կրող Պատմութեան մէջ, բայց նաեւ տարբերութիւններ. եւ դարձեալ որ Հեղինակն իւր ժամանակի Հայաստանը չէ զոր կը նկարագրէ, այլ էսպէս Հին Հայաստանը՝ իբր 387ինը. բայց արդէն միայն «Գ Հայք» բաժնին ու պարունակութիւնը կը ցուցնէ որ 536էն շատ ալ ետքն է, մանաւանդ թէ նաեւ 591ի բաժանումը գիտէ (Նփրկերտ, եւ նմանք): Բայց միւս կողմանէ ինչպէս ո'չ ամէն բան Յուստինիանու օրերու աշխարհաց համեմատ է, նոյնպէս եւ աւելի քիչ՝ Մաւրիկի: Թողունք այն կէտը թէ այսպիսի՝ զրեթէ լոկ անուններ եւ պատմական կամ այլ հաղիւ մէկ երկու խօսքով ակնարկութիւններ պարունակող գերբ մը շատ զիւրաւ օտարամուտ մասեր կ'առնու, եւ անուան մը փոփոխումը աշխարհագրական խնդիր մը կրնայ յառաջ բերել: Աշխարհագրութիւնս արդէն շատ խառնակ օրինակներ (եւ տպագրութիւններ) ունեցած է. եւ վերջին՝ ուղղագրեալն ալ՝ զոր հոս կը դործածենք (Համառոտը), չենք կրնար երբեք երդնուլ թէ այնպէս երած է Հեղինակին զրէն: Զիարդ եւ իցէ. քիչ շատ ապահով կ'երեւայ թէ է. դարու գրուածք մըն է, որուն Հեղինակը հին աղբիւր մ'առջեւ ունէր, բայց մէջընդմէջ բարեփոխած է՝ իրեն ծանօթ վիճակին համեմատ, ըլլայ իւր ժամանակին՝ ըլլայ այլուստ գիտցածին, ուղիղ թէ վերապահան. բայց աւելի բարեփոխած են գրելներն ալ: Այս գիտողութիւնը բնականաբար հայկական մասանց համար է: — Հոս նկատի կ'առնունք Համառոտը թէ՛ Զեռագրաց հնութեան եւ թէ՛ դարձեալ գիւրութեան համար. Ընդարձակի մասերը յետոյ:

Բանանք «Աշխարհք ընդհանուր Ասիոյ» հատածը: Ասիա բնականապէս կը բաժնուի «ի կողմանս կողմանս», բայց «նախ զկողմն Միջերկրեայս, որ մտանն ի մէջ ծովուն Յունաց (= արդի՝ Միջերկրական) եւ Պոնտոսի» (էջ 600. համ. «Մովսէ Յունաց... սահմանի յարեւելից Ասորուլք եւ Փրենիկեցուլք... յարեւելից-հիւսիսոյ՝ Միջերկրովքս մինչեւ ց'Գաղկեդոն» եւն՝ էջ 592): Այս «Միջերկրեայք» ծանօթ է արդէն մեզի (համ. վերը Սոր.) եւ իբր հոմէրական-յունական կալուածք պիտի պարունակէ բոլոր երկիրները մինչեւ Եփրատ, կ'ենթադրուի նաեւ Սորենեան գրուցաց «Ա—Գ Հայք»ը, բայց «Գ

Հայք» պէտք է որ մնայ բուն Հայաստանի մէջ: Այսպէս ալ է. միայն թէ՛ Երբ Սոր. պարզ կը յիշէր՝ հոս դժուար են սահմաններ: Ուստի կը նկարագրուին՝ իւրաքանչիւրը շատ կարճ՝ (Ա.) Բիւթանիա. — (Բ.) Միւսիա. — (Գ.) Ասիա առանձնակ. — (Դ.) Լիւզիա. — (Ե.) Փոնտիա. — (Զ.) Ոնորիա. — (Է.) Պարսկաստանիա. — (Ը, Թ.) Գաղատիա Ա. եւ Բ. — (Ճ.) Պամփիլիա. — (ՇԱ.) Սաւրիա (Իսաւրիա). — (ՇԲ.) Լիկոնիա (Լիկաոնիա). — (ՇԳ.) Կապպադովկիա Երկրորդ. — (ՇԴ.) Լիւնդոնտոս (Հեղեոնտոս, այսինքն՝ Հեղեսպոնտոս). — (ՇԵ.) Պոնտոս Պոդեմոնական. — (ՇԶ.) Կապպադովկիա Առաջին. — (ՇԷ.) Կիլիկիա ըստ ինքեան (Ա. եւ Բ.). — (ՇԸ.) Կիւրոս. — (ՇԹ.) Երկրորդ Հայք (օրինակաց պէսպիսութիւնք կան, երկու հին օրինակք չունին «Երկրորդ», նոյնպէս յաջորդը). — (Ի.) Առաջին Հայք. — (ԻԱ.) Երրորդ (նոյն 00. Երկրորդ) Հայք. — (ԻԲ.) Պոնտոս Կապպադովկիոյ: Վերջը՝ «Ահա կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք»:

Հոս կ'արժէր այս «Հայք» քիչ մը մօտէն տեսնել. բայց տեսնենք նախ բուն Հայաստանը: Առ այժմ կը բաւէ՝ Միջերկրէից եւ Հայաստանի սահմանին համար նշանակել թէ, ինչպէս բնական էր, առաջին «Բ» կողմէն որեւէ սահմանակցութիւն չունի՝ դժուար սահմանին համեմատ. «Ա Հայք... սահմանի յեկից (յ) Եփրատայ». նոյնպէս՝ «Գ (Բ) Հայք... երկայն տարածանի մինչեւ ց'Եփրատ». եւ վերջապէս «Պոնտոս Կապպադովկիոյ» կը հասնի «ց'Մոսքական լերինսն՝ որ բաժանին ընդ նա եւ ընդ մեծ Հայք»: — Միւս գրուի «Փոքր-Հայք» բացատրութիւն մը եւ աշխարհագրական բաժանում չկայ Հեղինակի քով ալ այս «Միջերկրեայք» մասին մէջ. եւ յիշեալ միւս դժեւուն մէջ պարունակուելու են, որոնց երեք ըլլալն ալ խնդրական է, եւ իրաւամբ: Ըստ հին աշխարհագրութեան Կողովենէ (Սերաստիա եւն) պարունակուելու էր Պողեմոնական Պոնտոսի մէջ, սակայն կ'երեւայ թէ Հեղինակը գաւառս յետնադոյն շրջանով կ'առնու, միայն ծովեկերեայ մասերը: Զիարդ եւ իցէ. անցինք Հայաստանի, նշանակելով որ հոս ալ էական սահմանագիծն է Եփրատ:

Կը նկարագրուին՝ Ասիոյ շարունակութեան մէջ՝ դարձեալ նախ Սարմատացոյ աշխարհ (ԻԳ.). — «Կողքիսէ, այսինքն է

Եգեր» (ԻԴ.) (մէջը՝ «ձանեթ՝ որք են Սաղտիք».) — «Վեոխա, այսինքն է Վիրք» (մէջը՝ Կղարջք, Արտահան, Զաւարք... Թոնդք, Կանդարք, Տաշիր», ուստի՝ Գուգարք). — «Աղբանիա, այսինքն է Աղուանք» (ասոր մէջ «գաւառս գորս ի Հայոց հանեալ է, Շիկաչէն, Գարգման» եւն): Օրինակները յատկապէս պէսպէս եւ խառնակ են Վրաց եւ Աղուանից մասին մէջ, եւ ընդհանրապէս Հին Հայաստանի Գուգարք, Արցախ եւ Ուտի նահանգները մտած են այս աշխարհաց մէջ — որ պատմական է՝ Հայաստանի բաժանմանէն ետքը՝ Մարգարանական Պարսկաստանի շրջանին (հին վիճակը՝ բաժանմանէ քիչ յառաջ՝ տես Բուզանդ, Ե. Ժ—ԺԵ, եւ այլուր): Ասի արդեւք եղած չէ որ Հեղինակը նոյն նահանգները դնէ բուն Հայաստանի մէջ, միայն կ'աւելցնէ՝ «զոր Աղուանք ունին» կամ «զոր Վիրք ունին»: Միւս նահանգներէն միայն Փայտակարանի համար նշանակուած է՝ «զոր այժմ Ատրպատական ունի» (571ին). կը սպասուէր ուրեմն նման որեւէ գիտողութիւն մը Սիւնեաց համար ալ, որ նոյն թուին իւր գիւնը Փայտակարան փոխադրեց. բայց չի յիշուիր, կ'երեւայ անով որ իւր ներքին վարչութիւնը պահեց, ինչպէս միւսներն՝ որ նոյն գրեց մէջ էին: Սակայն յամենայն դէպս աչքի կը զարնէ «Պարսկահայք» նահանգի համար որեւէ գիտողութեան պակսիւր: Զիարդ եւ իցէ՝ ահա Հայաստանն ալ:

Իէ. Մեծ Հայք յեկից կալով Կապպադովկիոյ եւ Փոքր Հայոց առ Եփրատ գետով մերձ ի Տաւրոս լեռուն, որ բաժանէ զնա ի Միջագետաց, եւ ի հարաւոյ սահմանի Ասորեստանի, եւ դառնայ առ Ատրպատականաւ ընդ Մարս մինչեւ ի մուտս Երասխայ ի Կասրից ծով. իսկ ըստ հիւսիսոյ առ երկ կայ Աղուանից եւ Վրաց եւ Եգերաց մինչեւ ց'նոյն դարձումն Եփրատայ ի հարաւ կոյս: ... Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս հնգետասան, որ են սյսոքիկ. Բարձր Հայք՝ որ է կողմ Կարնոյ. Զորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորձայք, Պարսկահայք, Վասպուրական, Արցախ, Սիւնիք, Փայտակարան, Ուտիա, Գուգարք, Տայք, Այրարատ»: Զասոնք «մանրամասնաբար պատմել» կ'ուզէ, «թէեւ սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր եւ ի քարտէս»: Մե'ղք որ շատ համառօտ է: Կ'առնունք մենք միայն երկու նահանգները՝ որոնք յաջորդ ուսումնասիրութեան մէջ շատ պիտի յիշուին: Ուստի՝

(ա.) «Արդ ունի Բարձր-Հայք դաւառս ինն. Դարանաղի, Առիւծ, Մնձուր, Եկեղեաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շատգոմբ, Կարին: Եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է Հայք քան դամենայն երկիր. քանզի ընդ չորս կողմանս գետս արձակէ: Ունի եւ լեռինս... եւ դամենայն պարարտութիւն, եւ քաղաք զԹէոդուպոլիս»: — Ուրեմն վիճակ մըն է այս՝ ամէնէն կանուխ Ե. դարէն (Թէոդուպոլիս, 421է հտքը). բայց արդէն «Խորձեան» եւ «Պաղնատուն» դաւառաց պակսելով՝ 591է հտքն է. միայն թէ «Մնձուր» մնացած է: «Բարձր-Հայք» անունը դրեթէ սեպհական է Հեղինակին. ո՛չ միայն հինք չեն դիտեր՝ մինչեւ Սեբէոս, այլ նաեւ անկէ հտքն ալ՝ շատ քիչերն եւ անազանազոյնք: Կարծես «Բարձր-Հայք» յօրինուած է Մաւրիկի «Մեծ Մասն Մեծ Հայոց» անյարմար յորջորջանաց տեղը լեցնելու համար:

(բ.) «Չորրորդ Հայք յերի կայ Բարձր-Հայոց. եւ դաւառք են ի նմա ութ. Խորձէն, Հաշտեանք, Պաղնատուն, Բալահովիտ, Ծոփք, Հանձիթ, Գորէք, Դէգիւք: Ունի բերդս եւ գետս եւ լեռինս եւ բլուրեղ» եւն: Ասի ճշդիւ Մաւրիկիոսի 591ի «Յուստինիանա» Դ Հայքն է, Բարձր-Հայքէ առած Խորձեան եւ Պաղնատուն. Աղձնեաց տուած՝ Նիփրկերտ կամ Մեծ Ծոփք: Կարեւոր կէտ մ'ալ է որ հին «Անգեղ-տուն» մոտցուած է. իսկ երկու նոր անուն երեւան կու գան՝ զորոնք այս նահանգիս մէջ կը յիշէ իրր 600ի զրոյ Գէորգ Կիւրացի¹⁰. այսինքն՝ Դէգիւք = «Դիգեսինէ», իսկ «Գորէք» («Գաւրէք») = «Գարինէ»: Ամբողջ նահանգը Գէորգ Կիւրացույ նկարագրութեան համեմատ է, միակ բացառութեամբ որ «Մնձուր» Բարձր-Հայոց մէջ մնացած է, թերեւս պարզ շփոթութեան մ'արդիւնք՝ նոյն իսկ գրչի մը (Գէորգ Կիւր., էջ 49. տես նաեւ Հիւրջման, անդ, էջ 67—73 եւ այլուր): Հետեւաբար՝ քիչ շատ Մաւրիկեան մտօք ըլլալու է նաեւ՝ «Աղձնիք առ Տիգրիս գետով կայ, եւ դաւառս ունի տասն, զԱրգն, զՆիփրկերտ, զՔեզ, զԿեթիկ» եւն եւն: Իրապէս՝ Մեծ Ծոփաց եւ հին Աղձնեաց սահմաններու խնդիրն ինչ մտօք ալ որոշենք (համտ. Հիւրջման, անդ, էջ 73—78 եւ այլուր), այս

¹⁰ Չափազանց կարեւոր դորձ մըն է Գէորգի հրատարակութիւնը՝ իւր ներածութեամբն ու անթիւքանութեամբք. Georgii Cyprii descriptio orbis Romani, ed. G. C. Gelzer, Leipzig 1890: Գէորգի նման քանի մը կարեւոր գործերը կը յիշենք յընթացս:

տեղ յիշուած «Նիփրկերտ»ը, որ այս ժամանակէն քիչ յառաջ տակաւին Մարտիրոսաց-քաղաք կը կոչուէր (ըստ ծանօթ աւանդութեան՝ Մարութայի ժողովելով «զնշխարս մարտիրոսաց ի Նիփրկերտ քաղաք»՝ Թէոդոսի Բ. օրով). եւ իրր Մեծ Ծոփաց գլխաւոր քաղաք Յուստինիանու Դ Հայոց կարեւոր մայրաքաղաքն էր, կրկին ամրացուած, Հոովմայեցուց եւ Պարսից զրեթէ սահմանին վրայ: Ճիշդ Նիմփիոս գետը՝ որուն Նիկեփորոս օժանդակէն է քաղաքիս այս անունը, յետոյ «Մուսիարկին», սահմանն մնացած էր՝ երկու դարէ աւելի (նաեւ «Բաղերթ», ասոր. «Կալլաթ», արդի Բատման-տու, 363էն մինչեւ 591). մինչեւ որ Մաւրիկի նոր ստացած երկիրներով սահմանը մղուեցաւ մինչեւ Բաղէի գետէն անդին: Եւ Մեծ Ծոփք՝ Աղձնեաց այս մասին եւ Միջագետաց ալ մէկ մասին հետ կաղմեց Մաւրիկի վերին-Միջագետքը կամ Միջագետաց «Դ Հայքը», որով այնչափ շփոթութիւն ելած է նաեւ մատենագրութեան մէջ (համտ. Հիւրջման, էջ 159—169 եւ այլուր): Եւ չմոռնանք՝ որ 387ին տակաւին մեր Տիգրանակերտն է այս Նիփրկերտը, ինչպէս հետզհետէ աւելի կը հաստատուի Լէմանի երեւան հանած այս ճշդումը (տես՝ բաց ի ուրիշ տեղերէ՝ նաեւ «Հայաստան» եւն, էջ 381—429 եւ 501—523): — Աղձնեաց միւս մասերը մեր ծրագրէն դուրս կը մնան: Իսկ Աշխարհագրութիւնը կ'աւարտէ Հայաստանն Այրարատով, զասի ալ յիշելով ամէնէն վերջը՝ «զմայր եկեղեցեացն ի Քազաւորաբնակ եւ յարքայանիստ վաղարշապատ քաղաքի: Ահա կատարեցան ամենայն Հայք»: Մէկ կողմանէ Փայտակարան եւն 571ի, Բարձր-Հայք, Դ Հայք, Աղձնիք 591ի եւն, եւ միւս կողմանէ «արքայանիստ» վաղարշապատ տակաւին, եւ ո՛չ Մարզպանական Դուին, ահա Աշխարհագրութեան նկարագիրը իւր հին աղբւրով եւ իրր է. դարու խմբագրութեամբ:

14. Եզրակացութիւն:

Այժմ կրնանք փակել մեր տեսութիւնը նկատմամբ հին հայ մատենագրութեան մեզի աւանդածներուն՝ Հայաստանի արեւմտեան սահմանին մասին: Եւ եզրակացութիւնը լիովին որոշ է: Ազաթանդեղոս, Բուզանդ, Կորիւն, Եղիշէ, Փարպեցի եւ նոյն իսկ Սեբէոս, ուստի մինչեւ է. դարու վերջերը Հայք ուրիշ բան չեն գիտեր՝ Եփրատէն արեւմուտք, բայց միայն «Հոռոմոց» կամ «Յունաց» աշխարհ, իսկ

ուսմանը՝ Սատաղ ու Եփրատ դիժը: Հայաստան արեւմուտքէն կը սկսի «ի Սատաղացուց քաղաքէն» (Ազաթ.), ինչպէս դէպ ի արեւմուտք կը հասնի «մինչեւ ի փոքր քաղաքիկն Սատաղու» (Բուզ.) եւն, եւ իւր սահմանադաւառքն են՝ Դարանաղի, Եկեղեաց եւն, եւ ընդհանրապէս՝ ամբողջ գծին համար՝ Բարձր-Հայք եւ Ծոփական երկիրք («Դ Հայք»): Առանձնապէս «քաղաքն Սեբաստացուց»՝ ուր որ յիշուած գտանք՝ միշտ «ի կեսարիայ կապալաովկացուց» ճամբուն վրայ՝ երթալու եւ դարու ատեն՝ կարեւոր «օթեւան» մըն է Յունաց երկրին, Հայաստանէ դուրս: Տեսանք որ Խորենացի ալ տարբեր չի գիտեր, որչափ ալ ունենայ Արամայ զրոյցն իւր Ա—Գ Հայքով եւ նաեւ Մորիփուղիկէսի զրուցով (որուն մէջ պատմական կորիզ մ'ալ կայ, տես յետոյ), ուստի նոյն էր անոր «Միջերկրեայքն» ալ, եւ աւելի բացորոշ՝ Եփրատի սահմանը: Տարբեր չէր կրնար ըլլալ Խորենացու աշխարհագրութիւնն ալ՝ իւր հոռոմէական-բելգանդեան «Միջերկրեայք» բաժնով, եւ Եփրատի սահմանագծով: Իւր Ա—Գ (կամ Ա—Բ) Հայք նոյնպէս հոռոմէական է եւ «Միջերկրեայք» ներքին վարչական խնդիր, սահմաններն ըլլան ճիշդ կամ ոչ, ինչպէս քիչ մ'ետքը կը տեսնենք: Բայց Հայաստանի հետ դորձ չունի, եւ ասի՝ նոյն իսկ Սարմատացուց եւ դրացի Կողքիս, Վերք եւն աշխարհներէնետքը կը նկարագրուի ուրոյն աշխարհ մը, միւս արեւելեանց հետ, յաջորդելով Ասորիք (ԻԸ), Հրէաստան (ԻԹ), Ապառաժ Արաբիա (Լ), Միջագետք (ԼԱ, մէջը՝ Ուռհա), Բարելոն (ԼԲ), Անապատ Արաբիա եւ Երջանիկ Արաբիա (ԼԳ), Մարք (ԼԵ, Ատրպատական եւն), «Արուստան» (ԼԶ), Եղիմացիք (ԼԷ), Պարսք (ԼԸ), Արեք (ԼԹ), եւ ի վերջոյ Սկիւթիա, Հնդկաստան, Տապոռքանիա, Ճենաստան եւ Սինէացիք: Մարական-պարսկականք եւ սահմանակիցք (Արուստան եւն), որոնց սահմանադաւառք Հայաստանը կը շօշափէին, թողլով նաեւ սահմանաց փոփոխութիւնք, որոնք առանձինն ուսումնասիրութեան նիւթ եղած են¹¹:

Կը խոստովանինք մեզի առանձինն ուրախութիւն պատճառեց այս Աշխարհագրութեան՝ բովանդակ մեր հին մատենագրութեան:

¹¹ J. Marquart, Eransahr, Berlin 1901 կամ Երան-աշխարհ «ըստ Աշխարհագրութեան Ստոյն-Խորենացուց», որուն մէկ մասն է «Հայ բղեալքը», Վիեննա 1903, ինչպէս յիշեցինք:

թեան մէջ (ոչ Թարգմանութեանց) առաջին անգամ եւ որչափ դիտենք միակ յիշուած «Փոքր-Հայք», եւ այն՝ շատ ուղիղ՝ իրր աշխարհագրական գաղափար, ո՛չ վարչային բաժանում (տես «Միջերկրեայք»՝ Ա—Գ Հայք եւն), եւ այն՝ դարձեալ շատ ճիշդ, ինչպէս կը յիշեն բոլոր դասականք, Փոքր-Հայք աշխարհ մը՝ որ հիւսիսէն սահմանակից է Բարձր-Հայոց դաւառաց «մինչեւ ցնոյն դարձուած Եփրատայ ի հարաւ կոյս», որ կը շարունակուի Եփրատի արեւմուտքը՝ մինչեւ Արամանոյ խառնուիլն եւ անկէ քիչ մ'ետքը կը դառնար իւր սահմանն դէպ ի արեւմուտք, թողլով Եփրատի շարունակութիւնը Կապադոկիոյ (Մելիտենեայ շրջան) եւ ապա Կոմագենեայ: Ուստի «Մեծ Հայք յեկից կալով Կապադոկիոյ եւ Փոքր-Հայոց առ Եփրատ գետով» լիովին համեմատ է հնութեան, օրինակի համար Ստրաբոնի՝ որուն ժամանակ Եփրատի արեւմտակողմը թէեւ շատոնց հոռոմէական, բայց տակաւին Փոքր-Հայք, Գամիք եւ Կոմագենէ հոռոմէական մանրապետութիւնք են, ուստի Հայաստան կը հասնի «մինչեւ ցՓոքր-Հայս եւ ցԵփրատ գետ, որով Հայք ի Կապադոկիոյ եւ ի Կոմագենեայ բաժանի եւ նմաներ, բայց նաեւ ընդհանրապէս Եփրատ կը բաժնէ Հայաստանը Կապադոկիոյէն՝ արդէն հնուց «սահմանակից Հայոց»՝ երբ երկուքն ալ սատրապութիւնք էին եւն (տես Ստրաբոնի՝ ԺԱ—ԺԲ գրքերը՝ կարգաւ Պարթեւք, Մարք, Հայք, Գամիք, Պոնտականք եւն, մանաւանդ Շ. 527—556 եւն) աւելի եւս՝ երբ Գամրաց ետեւէն նաեւ Փոքր-Հայք նահանգ եղան եւ ամբողջ Եփրատայ արեւմտակողմը դրսուց Կապադոկիոյ նահանգը, ինչպէս Պղինեայ ըսելը՝ թէ Հայաստան «սկսեալ ի Պարխար լեռանց Եփրատաւ բաժանի ի Կապադոկիոյ» (Պղին. 2, 9). կամ Պտղոմեայ նման նկարագրութիւնը (Յ, 13) եւն, յիշելու համար միայն դատենք: Պէտք ալ չկայ աւելի մանրամասնութեանց սահմանադի մը՝ որ ի վերջոյ արուեստական բան մ'ալ չէր, այլ նոյն իսկ պատմութեան ստեղծածը ի սկզբանէ ի վեր: Եթէ Ուրարտուք կրցան հասնիլ մինչեւ Եփրատ, եւ հիւսիսարեւմուտք՝ քիչ շատ հասան ապագայ Հայաստանի սահմանները (Ուրարտեանց արեւմտեան սահմանին մասին համտ. ի միջի այլոց՝ Լէման, «Հայաստան», էջ 463—500), անոնց տեղը բռնող Հայք ալ կը բնակին Եփրատէն դէպ ի արեւելք, Եփրատով բաժնուելով Կի-

լիկիայէ (հին մտօք) որով սակէ կը սկսի Հայաստանը (Հերոդ. Ե, 52), ինչպէս ընդարձակ մտօք հին Կապադովկիայէ որ Հայաստանի արեւմտեան սահմանակիցն էր (հմմտ. Ստրաբ., ԺԱ, 14 էւն)։ Եւ նոյն մնաց Եփրատ թէ՛ նախաղեքսանդրեան եւ թէ՛ յետաղեքսանդրեան շրջանին, երբ այն Սատրապուլիւնք, հետզհետէ արդէն մօտեցած վերջին սահմանաց՝ փոխուեցան թաղաւորութեանց Գամբաց, Պոնտոսի, Հայաստաններու եւն։ Հայաստան երբ յեականս իւր վերջին ձեւն առաւ՝ Չարեհի եւ Արտաշիսի օրով (190 Ն. Ք. եւ անկէ ետքը), որչափ ալ երկուքի բաժնուած, իրերը կազմակերպուած են ճիշդ այնպէս՝ ինչպէս կը դասնէք այնուհետեւ դարերով։ Եփրատ կը բաժնէ կրկին Հայաստանները Գամբիքէ՝ որ կանուխէն կրցաւ իւրացնել Մելիտենէի շրջանը, եւ «Փոքր-Հայք»է, այն պոնտոսաց աշխարհէն, որ սկսած էր կազմուիլ այն նեղ շրջանին մէջ՝ զոր թողուցին իրեն Գամբիք եւ Պոնտոս մէկ կազմանէ եւ Հայաստան միւս կողմանէ՝ որ դրանց Բարձր-Հայոց դաւաճները, եւ Փոքր-Հայք ստիպուեցան դէպ ի ծով ձգտիլ՝ աւելի պոնտոսաւորով։ Նոյն է վիճակը՝ Տիգրանու օրով, երբ վերջնականապէս կազմուեցաւ Հայաստանի գաղափարն իւր որոշ սահմաններով։ Եփրատի սահմանագիծը մնաց, եւ չէր կրնար փոխուիլ՝ Փոքր-Հայոց Պոնտոսի մէջ ձուլուելով ալ, որով միայն Պոնտոս սահմանակից եղաւ Հայաստանի (— Փոքր-Հայք իբր ուրոյն աշխարհ մնաց՝ Պոնտոսի ներքեւ ալ —) եւ Տիգրանի՝ Մելիտենէի շրջանի տիրապետութիւնն ա՛յնպէս կարճատեւ եղաւ որ պարզ արշաւանքներու արդիւնքն ունեցաւ, եւ էական փոփոխութիւն չկրցաւ կազմել Եփրատի գծին։ Տիգրանեան Պոմպեական դաշնադրութեամբ զծուած սահմանը՝ նոյնպէս Եփրատ՝ այնուհետեւ դարերով մնաց՝ առանց տեւական փոփոխութեան մը՝ սահման Հռոմէական Պետութեան եւ Հայաստանի, մինչեւ Հայաստանի բաժանումն։ Ուստի Հայաստաններու եւ Հայաստանի անկախութեան ամբողջ շրջանին (190 Ն. Ք. մինչեւ 387 Յ. Ք.), Եփրատ միշտ նոյն մնացած է՝ արեւմտեան Սահման Հայաստանի, որ ինչպէս կը բաժնէր ասի նախ անկախ «Փոքր-Հայք» եւ Գամբիք աշխարհներէն, նոյնպէս հռոմէական մանրապետական Փոքր-Հայքէ եւ Կապադովկիայէ, նոյնպէս հռոմէական «Կապադովկիա» նահանգէ (ասոր մէջ ալ «Փոքր-Հայք» իբր ու-

րոյն աշխարհ մնաց՝ ինչպէս միւսները)։ Եւ նոյնպէս հռոմէական Դիոկղետիանու ստեղծած «Հայք» նահանգէ (կենդրոն Մելիտենէ)։ Ճիշդ խօսելով նաեւ Հայաստանի բաժանմամբ (387) եւ երկու կողմի մէջ ալ Արշակունեաց իշխանութեան վերջին արքայի անկմամբ (390 եւ 428 Յ. Ք.) ուստի Բարձր-Հայոց եւ Ծովափնայ հռոմէական ըլլալով՝ Եփրատի գիծը չկորսնցուց իւր կարեւորութիւնը՝ թէ՛ աշխարհագրորէն (Բիւզանդեան աշխարհագրաց «Միջերկրեայն»՝ մինչեւ Եփրատ) եւ թէ՛ նաեւ վարչականօրէն։ Մինչ Եփրատէն արեւմուտք ամբողջ աշխարհները, բնականապէս Թէոդոսի Ա.—Բ «Հայք» ալ, լիովին հռոմէական երկիրներ էին, ենթադրուած հռոմէական իրաւանց եւ վայելելով հռոմէական քաղաքացւոյ իրաւունքները, Եփրատէն արեւելք նոր ստացուած Հռոմէասայաստանը մնաց՝ պետական այս կազմակերպութենէ դուրս երկիր մը, ներքին ազգային կազմակերպութեամբ, նախարարական դրութեամբ եւն։ Իրապէս միայն Յուստինիանոս ջնջեց (536ին) այս կողմանէ Եփրատու գիծը՝ լիովին հռոմէական իրաւանց ենթարկելով Հռոմէասայաստանը¹²։ Եւ կարծես իբր արտաքին նշան՝ «Փոքր-Հայք» աշխարհը (որ Թէոդոսեան բաժանմամբ Կողովենէի հետ «Ա. Հայք» կը կազմէր), կ'անցնի միակալու Հայաստանի հետ, Բարձր-Հայոց հետ կազմելով «Ներքին Հայքը» (կամ Յուստինիանու «Ա. Հայքը»)։ — Անկախ Հայաստանի ստեղծուելէն ի վեր՝ այս առաջին անգամ է որ Փոքր-Հայք կը միանայ Հայաստանի, եւ ինչ որ հայ թաղաւորք երբեք չյաջողեցան՝ կատարեց հռոմէական վարչութիւնը, բնականապէս՝ իբր պարզ վարչական բաժանում։ Եւ այսպէս մնաց նաեւ Մաւրիկի բաժանման մէջ՝ «Մասն Մեծ Հայոց» շրջանին մէջ։ Սա կարեւոր կէտ մըն է։

Անցողակի նշանակենք կէտ մ'ալ։ Այս իրադարձութեանց մէջ «Փոքր-Հայք» իբր աշխարհ երբեք չփոխուեց չէ (— ինչպէս կ'ընեն ոմանք —), հռոմէական վարչական այն բաժանմանց հետ։ Ուստի հոս՝ Բարձր-Հայոց հետ միացողն էր՝ իրական Փոքր-Հայք աշխարհը, այն զոր կը նկարագրէ օրինակի հա-

¹² Յուստինիանու ատեն եւ մինչեւ այս շրջան նախարարութեանց գրեց եւն մասին հմմտ. կարեւոր գործս, Ն. Ադոնց, «Հայաստանը Յուստինիանոսի դարուն մէջ, քաղաքական վիճակ ըստ նախարարական կազմակերպութեան»՝ ուստերէն, Պետերբուրգ 1908, էջ 526։

մար Պողոտէոս (Ե, Գ. հմմտ. Ստրաբ., Ե. 556 էւն) եւ որ էապէս նոյն է անոր հետ՝ զոր կը նկարագրէ դարեր ետքը՝ Կոստանդին Ծիրանածին (Թեմ. 31, 7), որչափ ալ ասոր «Կողոնիա» թեմը բնականապէս քիչ մ'աւելի ընդարձակ է։ Անոր համար աշխարհը չփոխուեց չէ ո՛չ Պողոմոնականին եւ անոր մաս Կողովենէի (Սերաստիա), եւ ո՛չ միւս շրջանաց հետ, որոնց միացուած է այլեւայլ բաժանմանց ատեն, մտնելով ինչպէս Դիոկղետիանեան «Հայք»ի մէջ (Մելիտենէ), նոյնպէս Թէոդոսեան «Ա. Հայք» շրջանին մէջ (զոր կը կազմէին՝ Փոքր-Հայք, Կողովենէ, եւ Գաղատական Պոնտոսէ՝ Սերաստուպոլսոյ շրջանը)։ Յուստինիանու օրով այս վարչական բաժնէն (որուն մէջ մնաց ուրեմն իբր 378էն մինչեւ 536) բաժնուելով, Կողովենէի (Սերաստիա) շրջանը շատ փոքր կ'ըլլար, ուստի կցուեցան՝ Սերաստուպոլսէն (արդի՝ Սուլուսէրայ) դատ՝ նաեւ Պոնտական Կոմունայի (արդի՝ Կիմենէկ) եւ Բերիտայի (արդի՝ Բուրսա) շրջանները, որոնք կազմեցին Յուստինիանու «Բ. Հայք», նոյնպէս՝ Մաւրիկի։ Կը տեսնուի որ «Հայք» այս պոնտական շրջաններու աւելի նշանաւորութիւն մը չունի քան պարզ անուն մը, իրական «Փոքր-Հայքի» բաժնուելէն ետքը, քիչ շատ այն իմաստով՝ զոր կը բացատրէ դարեր ետքն ալ Կոստանդին Ծիրանածին իւր ժամանակի համբաւուր «Արմենիական» (մերոց՝ Արամանեակ, «Հայկական») բանականութեմի համար (շրջանը՝ Հին Հելլեսպոնտոս կամ այն ժամանակի «Կապադովկիա Գ.»՝ Մինոպէ մինչեւ Չելա)։ Թէ այնպէս կը կոչուի «վասն զի մօտ է Հայոց» (Թեմ. 17—21)։ Սակայն թողուք դատենք, եւ մտադիր ըլլանք որ Եփրատ այնու ամենայնիւ նաեւ անկէ ետքն ալ սահմանագիծ եղաւ յաճախ։ Արարական շրջանին՝ Բիւզանդացիք հազիւ միջոց մը կրցան պահել Մելիտենեան շրջանը, բայց պահեցին «Փոքր-Հայք», որով նորէն Եփրատ սահմանագիծ եղաւ այս բաժնին՝ գոնէ մասամբ։

Կը տեսնուի՝ Հայաստանի գաղափարն իւր որոշ սահմաններով, առանձնապէս Եփրատի սահմանը, ծնունդ է ո՛չ հեղինակի մը մտքին, ո՛չ արքայի մը կամքին, այլ արդիւնք է ցեղի մը եւ ազգի մը նոր հողի վրայ հետզհետէ զարգացման եւ անոր պատմութենէ բխած։ Տիգրան Մեծ մ'անդամ չկրցաւ տեւականապէս փոխել նոյնը։ Հետեւաբար այս գաղափարը՝ ծնունդ նախարչակունեաց շրջանե-

րու, վերջնական (միութեամբ) ձեւ առած Տիգրանայ Մեծի ձեռք, տեւեց ամբողջ Արչակունեան շրջանին։ Չարմանալի չէ ուրեմն, որ հայ գրականութեան սկսելէն դարերով յառաջ կազմուած ու ձեւակերպուած այս գաղափարը մնաց անփոփոխ Հայոց քով, եւ այնպէս պայծառ կը ցոլանայ հայ գրականութեան մէջ, թէեւ փոխուած ըլլային՝ անթիւ անգամ միւս սահմանները եւ թէեւ Հայաստանն իբրեւ ամբողջութիւն եւ իբրեւ անկախ պետութիւն շատոնց պոյութիւն չունենար մեր յիշած բոլոր մատենագրաց խմբագրութեւն ատեն։

Աւելորդ չենք համարիր փակել մեր այս նախարան տեսութիւնն ակնաւոր քննչի մը խօսքերով (Հիւրչման, անդ, 26—28)։ «Հայաստանի աշխարհագրական գաղափարը հաստատուն կերպով դարգացաւ Տիգրանի ատեն, որ առաջին անգամ Հայաստանի միացուց ծովքն ու Կորդուքը։ Յաջորդ դարերուն այս գաղափարը տիրող մնաց Հայոց քով, թէպէտ եւ քաղաքական յարաբերութիւնները միշտ նոյն գաղափարին չէին համապատասխաներ։ Եթէ հարաւային նահանգները Պարսից ալ անցնէին, արեւմտեանները՝ Յունաց, հիւսիսայինները՝ Վրաց կամ Աղուանից, եթէ Հռոմէացիք եւ Պարսիկք երկիրը իրենց մէջ բաժնելու ալ ըլլային, միշտ Հայաստանը Հայոց համար այն երկիրը կը մնայ, որ — հին բացատրութեամբ — իւր սահմանն ունի հարաւէն Մասիոս լեռը («Տաւրոս», որ Հայաստանը Միջագետքէն կը բաժնէ, Ստրաբ., Ե. 521, 522, 527), արեւելքէն՝ Ատրպատականն ու Մարաստանը, հիւսիսէն՝ Կասպից ծովուն կողմերը գտնուող Պարաքոթրեան լեռները, Վիրքն, Աղուանքն ու Կաւկասը՝ Մոսքեան եւ Կողքեան լեռներով, արեւմուտքէն՝ Պարսարը եւ Սկիւթիսիան, Փոքր-Հայքն ու Եփրատը (որ Հայաստանը Կապադովկիայէն ու Կոմագենէէն կը բաժնէ)։ Գրեթէ այսպէս կը նշանակէ Հայաստանի սահմանները Ստրաբոն (Ե. 527)՝ Թէոփանէս Միտիլենացւոյ հետեւելով, որ Պոմպեոսի՝ Միհրդատեան պատերազմին մասնակցած եւ զայն նկարագրած է (Քրիստոսէ յառաջ 63—62 տարին. տես W. Fabricius, Theoph., էջ 8)՝ գրեթէ ա՛յսպէս պիտի գտնենք Սորենացւոյ Աշխարհագրութեանը մէջ Հայաստանի սահմանները՝ թէեւ շատ մը փոփոխութիւններ եղած ըլլան Հայաստանի սահմաններուն մէջ։ Բայց թէ Պոմպեոսի ատենն իսկ Հայաստանն

որոշ եւ հաստատուն դադարի մըն էր, անկէ յայտնի է որ արդէն նոյն ատեն իսկ՝ լեզուաւ, կրօնքով ու սովորութիւններով դարգացած էր համայնի հայութիւն մը, որ քանի մը նահանգներուն ամբողջ դանդաղածը կամ բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմէր, իսկ ինչ ինչ նահանգներու մէջ ալ՝ դէժ տիրող դասակարգը. այս հայութիւնը այն հաստատուն կայն էր՝ որ պէսպէս ազդերն ամբողջութեան մը միացուցած էր՝ երկրին ի բնէ ու պատմական յարաբերութեանց բերմամբը դժուած սահմաններուն մէջ: Իսկ երբ Ստրաբոն կ'ըսէ թէ Արտաշէսի եւ Չարիադրիսի ձեռք ընդարձակուած Հայաստանի մէջ բնակիչները (Ստրաբոնի ատեն, ինչպէս պէտք ենք ընդունիլ) ամէնքն ալ համալեզու էին (C. 528 «մինչև ամենեցուն համալեզու լինել»), այս խօսքը դասական իմաստով առնելու է, այլ այնպէս մը պէտք ենք հասկընալ, որ հայ լեզուն թէեւ ամբողջ Հայաստանի մէջ կը հասկըցուէր տիրող ազդին լեզուն ըլլալուն, բայց միայն Հայաստանի հին նահանգներուն մէջ ընդհանուր կը խօսուէր» են:

Թողունք լեզուի եւ հայացման խնդիրը: Գնացեալ լիովին կը բացատրէ արդի բանասիրութեան հայեացքը: Եւ արդէն Հին Հայաստանի դադարի երբեք այլազգէն ըմբռնուած՝ նոյն իսկ իրաց բնական ստիպմամբ: Այսպէս — Եփրատեան Սահմանադժով են — նկարագրած է նոյնը Հայաստանի մասին առաջին կարեւոր գործոյ Հեղինակը՝ Հ. Ղ. Ինճիբեան («Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետ. 1822, էջ 553). որչափ ալ՝ իւր ժամանակին համար ըմբռնելի՝ տարբեր կարծիք ունենար Խորենացույ զրուցաց եւ նմանաց մասին (համտ. նաեւ իւր ոչ նուազ գործը՝ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Վենետ. 1835, Հատ. Ա.—Գ): Այսպէս՝ նորագոյն լուսազոյն երկն այս մասին՝ Հ. Հիւրջմանի յաճախ յիշուած գործը («Հին Հայոց Տեղւոյ անունները» Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով, Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկեան, Վիեննա 1907, էջ ԺԶ + 443) — յիշելու համար միայն գասոնք: Այսպէս — յիշելու համար հատ մ'ալ նորագոյն աշխարհագրութեան համար անգամ — Հ. Ղ. Ալիշան, «Տեղագրի Հայոց Մեծաց» (Վիենետ. 1855): Կը թողունք յիշել ուրիշ երկերը:

Հետեւութիւնը շատ սրտէ է: Բանասիրութիւնը Հայաստանի սահմաններու մէջ չառնուել ստիպուած է նոյն իսկ սահմանակից «Փոքր-Հայքը», միւս նման դրից մէջ՝ աւելի կամ նուազ իրեն նման հայ ցեղին հետ ազերս մ'ունեցող միւս սահմանակիցները (ինչպէս անոր կից Խաղտիքը, վարը Ուոհայաստան, Միւղդոնիա եւն): — Իսկ Կողոփեմէի (առանձինն՝ Սեբաստիայ) մասին «Հին Հայաստանի սահմաններու» եւ ոչ կրնամք խօսիլ ընել, ինչ ալ ըլլան ասոր եւ «Փոքր-Հայոց» ազերսները: Այս մասին որեւէ խնդիր չի կրնար ըլլալ:

(Շարունակելի):



ՔՆՆՈՒԹԻՆՆ ՏԵՍԼԵՆՍ Ս. ՍԵՀՈՎԵՅ

Գ. ԿԱՐԾԻՌՆԵՐ ՏԵՍԼԵՆՍ ՇՈՒՐՁԸ

23. Տեսանք վերագոյն (§ 16), թէ Տեսիլքիս վաւերականութեան մասին կասկած յայտնած էր արդէն Ներսէս Լամբրոնացի. «զոյս ասեմք, թէ Տեսիլն այն ոչ հաւաստի առ մեզ՝ գոյ սրբոյն Սահակայ, այլ ի կարծիս մնայ»: Պատճառարանութիւնը, զոր յառաջ կը բերէր Լամբրոնացի, յատկապէս այն, թէ Մովսէս Խորենացի անոր մասին յիշատակութիւն է ըրած, հիմնաւոր էր. վասն զի Մ. Խորենացի ոչ միայն Տեսիլքը ճանչցած է, այլ եւ կարգացած է անոր Յառաջարանը, այնպէս ինչպէս ներկայացուած է այն Ղ. Փարպեցույ վերագրուած Ա. Գրուագին մէջ:

24. Մկրտիչ Իմին¹² կը համարէ թէ Տեսիլքը այն ձեւին մէջ, ինչպէս աւանդուած է, կեղծիք մըն է, յետ ժամանակաց մուծուած Ղ. Փարպեցույ Պատմութեան մէջ. «Լեզուն, կը գրէ Իմին, բոլորովին տարբեր է Ղազարի լեզուէն»: Ինքն ալ կը ձայնակցի Ներսէս Լամբրոնացույ, երբ կը հաւաստէ թէ Մ. Խորենացի անձանօթ է Տեսիլքիս: Ն. Լամբրոնացի, որ կը կասկածէր Տեսիլքիս վաւերականութեան մասին, հաւանօրէն էր դատած զայն Ղ. Փարպեցույ Պատմութեան մէջ:

Մ. Իմին կ'երեւայ թէ ուշադրութեամբ է կարգացած Մ. Խորենացույ վերագոյն յա-

¹² О видѣніи святаго Саака (տե՛ս § 5):

ռաջ բերուած (§ 10) հատուածը: Մ. Խորենացի աչքի առաջ ունեցած էր Ղ. Փարպեցույ Ա. Գրութիւնը, ուր կար Տեսիլքս իւր Յառաջարանով. ուստի եւ Ն. Լամբրոնացի, եթէ ունէր ձեռքի տակ Ղ. Փարպեցույ մատենը, կարգացած պիտի ըլլար հոն Տեսիլքս ալ:

25. Գրիգոր Խալաթեանց¹³ իւրացնելով իւր ուսուցչին՝ Մ. Իմինի տեսութիւնը կը փորձէ նոր պատճառարանութիւններով ամբողջել զայն. «Եթէ ոճ եւ լեզու Տեսեանն եւ Եթէ այլ պարագայք ինչ նորին այնպէս կասկածելի առնեն զգրութիւնը, մինչ հաղիւ իմն մարթ իցէ Ղազարայ զայն համարել գործ: ... Տեսիլն Ս. Սահակայ առ ժամանակաւ գիտնական եպիսկոպոսիս (Ներսիսի Լամբրոնացույ) շրջէր ի միջի ժողովրդեան իրբեւ առանձին իմն աւանդութիւն եւ տակաւին ոչ անցեալ ի շարս մատենին Փարպեցույ: Թուի, թէ յետ ժամանակի ի վերայ համառօտ բանից Փարպեցույ յարմարեալ իցէ մանրապատումն այն Տեսիլ՝ իրբեւ գրաւոր իմն աւանդութիւն...: Կարծիքս մասամբ իւրեք հաստատի այնու, զի պատմագիրք ոմանք՝ ծաղկեալք զինի Ն. դարու՝ մինչեւ ցորոշ իմն ժամանակ (ցԺ. դար) ոչ յիշեն ինչ զգրաւոր Տեսիլն Ս. Սահակայ հանդոյն այնմիկ, որ աւանդի ի Պատմութեան Ղազարու» (124): Առաջին անգամ ի մերոց Թովմաս Արծրունի եւ օտարներէն՝ Կոստանդին Ծիրանածին կը յիշեն Տեսիլքը ըստ այժմեան բովանդակութեան (124—126): Ասկէ «մարթ է ընթացել, կը գրէ Խալաթեան, թէ գրաւորն այն Տեսիլ թերեւս ի Ժ. իցէ յօրինեալ դարու եւ ի կարգ Ղազարայ Պատմութեան յարմարեալ, թէեւ իրբեւ անգիր աւանդութիւն գուցէ ընդ երկար շրջէր ի մէջ ժողովրդեան» (126): Ինչպէս, կ'ըսէ Խալաթեանց, Փաւստոսի համառօտ տողերէն ծաղեցաւ «մանրամասնեայ գուշակութիւնն Ս. Ներսիսի ձեռամբ Մեսրոպ երիցու Ժ. դարուն», «Թուի մեզ, եթէ ըստ այնմ օրինակի ընծայեցաւ ի լոյս եւ մերս այս երկարապատում «Տեսիլ Սահակայ, յառաջացեալ ի հակիրճ բանից Խորենացույ եւ Ղազարայ. այլ թէ որո՞յ ձեռամբ՝ գործ է գտանել» (130): Տեսեան հեղինակը ծանօթ է Գրիգորի Տեսեան, որմէ փոխառութիւններ ալ ունի (127—128, ծան. 2):

¹³ Ղ. Փարպեցի եւ գործք նորին (տե՛ս § 5), էջ 120—130:

26. Մ. Գարգաշեան¹⁴ կը գրէ. Սահակայ Տեսիլն «նմանութիւն է Տեսեան Լուսաւորչին, ե՛ւ արուեստիւ ե՛ւ լեզուաւ խոնարհազոյն քան զնա: Նպատակն է՝ Վարդանանց ժամանակին պատմութիւնն, ուխտապահաց եւ ուրացելոց (զորս յայտնի իսկ կ'անհարկէ ուրեք), ցուցնել մարգարէական սղով կանխաւ յայտնուած առ Սահակ՝ իբր նախախնամութեան խորհրդով սահմանուած: Այս տեսութիւնէն յայտնի է, թէ գրողն էր յետոյ քան զպատերազմն Վարդանանց, ի միջոցի երեսնամեայ ժամանակիս 452—482: ... Փարպեցին... կը յաւելու եւս թէ Սահակ զրեց զայն երկնաւոր հրամանաւ, թէպէտ լեզունն է Սահակայ...: Աւելորդ է ասել, թէ Տեսիլս այս... ոչ այլ ինչ է, եթէ ոչ կեղծիք բարեպաշտ քրիստոնէի, այն դարուն ճաշակին յարմար՝ հողեւոր, շատ անգամ ցուրտ սոյաբանութիւններով լի...: Գիտել արժան է սակայն, թէ բարեպաշտ հեղինակն, ո՛ր եւ է, համբակ էր իւր արուեստին. քանզի կուտայ գուշակել առ Սահակ իբր յայտնութեամբ թէ Լուսաւորչայ ցեղէն պիտի նստէին ժամանակ մը կաթողիկոս ընտիր անձինք, որոց պիտի յաջորդէին յետոյ անարժան մարդիկ. բայց այս եղաւ յառաջ քան զՍահակ, մինչ Տեսիլք, որ է մարգարէութիւն՝ ապազային համար է եւ ոչ անցելոյն. նա մանաւանդ այն յայտնութեան մէջ իբր ապազայ ցուցուած անձանց մին է նոյն-ինքն Սահակ»:

27. Հ. Յովսէփ Գաթրճեան իւր Սրբազան Պատարագամատոյցը Հայոց» աշխատութեան մէջ¹⁵ այլ եւ այլ առթիւ անդրադարձած է Տեսիլքիս. կարեւոր կը համարիմ հոս ամփոփել իր տեսութիւնը Տեսիլքիս շուրջը, որ վրիպած է ցայսօր շատերու ուշադրութիւնէն. «Տեսիլ սրբոյն Սահակայ» գրուածքը «Ղ. Փարպեցի՝ Կաթողիկէին Վարդարշապատու երէցը՝ Ն. դարուն վերջերը մեզի՝ անանկ ինչպէս որ կը գտնէ, կու տայ: Մեզի... Սահակայ Տեսեան ստուգիւ եղած ըլլալը կամ չըլլալը հող է. բաւական է որ ան ատեն եւ ոչ ետքը մէկն այսպէս խորհեցաւ եւ գրեց եւ ան դադարաւորներն ունեցաւ»: «Լեզուն Ն. դարուն շատ վերջերը չ'իյնար»:

«Հրեշտակ մը տեսնուածին մեկնութիւնը կու տայ. այս մեկնութեան գլուխն ալ սանկ

¹⁴ Մ. Գարգաշեան, Գնական Պատմութիւն Հայոց, Գ., 9—10:

¹⁵ Հ. Յ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատոյցը Հայոց, Վիեննա 1897, էջ 727—728: